

е... ой библи

Н Арм. ССР



ՀԶՄԻԱԾԻՆ

1970-11

ՀԴԽ-12.148

ՌՆԺԸ
ԻԵ ՏԱՐԻ

Յոմնուար

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ա


1970



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓՍՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՅՈՒ ՄԱՀՎԱՆ
ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՅ ՍՐԲՈՅ
ԼՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՅ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ԾՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ
ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՅ

«Զայնու ժամանակաւ բազում էին երեւի վարդապետք յԷջմիածին, քաջաբանք, բանաստեղծք աստուածային գրոց, քաջք գիտունք և հմուտք, յորոց մի է և Առաքել վարդապետն վիպասան»:

ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՀԱՅԻ

Յիշենք անցեալը, արդար գնահատելու համար մեր ներկան, և յստակ տեսնելու համար ուղիղ ճանապարհը ապագային:

Հազարազանգ Անիի անկումէն և Կիլիկեան հայոց թագաւորութեան կործանումէն յետոյ, հալ ժողովուրդը ապրեցաւ իր պատմութեան ամենամոռայ

Հայ վերածնունդի այս շարժման կարևոր դեմքերեն ու դերակատարներեն մին կը հանդիսանայ Առաքել վարդապետ Դարիժեցին, միաբանը սուրբ Էջմիածնին, աշակերտը շինարար Փիլիպպոս կաթողիկոսին, որուն հրամանաւ գրի կ'առնէ իր յայտնի պատմագրութիւնը՝ «Պատմութիւն Առաքել Դարիժեցոյ, սակա դիպուածոց Հայաստանեայց ի գաւառէն Արարատայ և մասին Գողթան գաւառի», գոր կ'աւարտէ 1662 թուականին, Յակոբ կաթողիկոսի շնորհով: Առաքել վարդապետ, այդ բախտորոշ տարիներուն, ս. Էջմիածնի հաւատաւոր ու հայրենասէր հոգևորականներու առաջին շարքին վրայ կը գտնուի՝ իբրև եկեղեցոյ լուսամիտ ծառայ և քաջասիրտ քարոզիչ, իբրև ուսուցիչ և գրող, իբրև հաւատարիմ ու ծրագրան գործակից Հայոց Հայրապետներուն: Զինուորեալ վարդապետը պատուով կը կատարէ իր պարտքը նաև իբրև հայրապետական նուիրակ դէպի Յունաստան, Իսպահան, Ամասիա, Սեբաստիա, Ռոհա, Հալէպ և Նորասողէմ, ամենուրեք ցիրուցան հայութեան տանելով Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնութիւնը և հայրենիքի հայ հոգևոր զարթոնքի աւետիսը, պապառկելով միաժամանակ, պանդուխտ հայութեան նի-


թական օգնությունը և Էջմիածնի պալատության և Հայաստանի վանքերու շինության ի խնդիր:

Դարիժեցի վարդապետը իր ամբողջ կեանքով ու գործնեությամբ, համակ ներշնչում է, համակ նուիրում, անդուլ աշխատանք, անսակարկ ծառայություն, և մարմնացումը իր ժամանակի հայոց վերածնած քրիստոնեական հաւատքին և պալատ հայրենասիրության: Ծմարտապէս առաքելատիպ հայ հոգևորականն է, սուրբ Էջմիածնի պաշտամունքով ոգեշնչուած: Այսօր ալ երեք հարիւր տարիներու բարձունքէն, աստուածատէր ու հայրենանուէր վարդապետը կը պատգամէ մեզի ամենուս՝ «Ի վերայ Աջուն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան»:

Օրհնութիւն և լո՛յս Դարիժեցի Առաքել վարդապետի սուրբ յիշատակին:


Այսու Մեր կոնդակով կ'առաջադրենք ու կը պատուիրենք, որպէսզի Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ հանդիսատր հոգեհանգստեան արարողութիւններ կատարուին Առաքել վարդապետի յիշատակին, անոր մահուան երեքհարիւրամեակի առթիւ, յառաջիկայ մայիս ամսուան ընթացքին և Կենդանի խօսքով ու հրատարակութիւններով ընդգծուին կեանքն ու վաստակը Մայր Աթոռիս վաստակաշատ միաբանին:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հալեցեալք յեւս գնացից նոցա՝ մնանողք եղերոք հաւատոցն» (Եբր. ԺԳ 7): Ամէն:



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուա կոնդակս ի 21-ն յունուարի
1970 փրկական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԺԹ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 673



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻՑ ՀԵՏՈ

Մայր Աթոռում 1969 թվականի սեպտեմբերի 27—հոկտեմբերի 2-ը, Հայոց Հայրապետի հրավերով և Նրա բարձր նախագահության ներքո, գումարվում է եպիսկոպոսաց ժողով, Երուսաղեմի, Կ. Պոլսի պատրիարքների և 23 արքեպիսկոպոսների ու եպիսկոպոսների մասնակցությամբ, որը մեր եկեղեցական, ժամանակակից տարեգրության մեջ կհանդիսանա պատմական իրադարձություն՝ իր ներկայացուցչական հանգամանքով և օրակարգի վրա դրված կարեւոր հարցերով: Առաջին անգամ էր, որ Մայր Աթոռում, Հայոց Հայրապետի շուրջ, հավաքվում էր մեր ա. եկեղեցու եպիսկոպոսաց գրեթե ամբողջ դասը: Դա ուրախալի և ողջունելի իրադարձություն էր:

Վերջին տարիներին, Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի գահակալության օրերին, կյանքի է կոչվում ավելի լայն չափով եպիսկոպոսաց ժողովներ գումարելու առաքելական և հնավանդ սովորությունը՝ զբաղվելու համար մեր եկեղեցական կյանքում կարևոր և այժմեական հարցերի ուսումնասիրությամբ և քննությամբ:

Ժողովների միջոցով եկեղեցական հարցեր քննելը և համապատասխան որոշումներ ընդունելը առաքելական է, և այդ կանոնին հետևել է միշտ հայ եկեղեցին:

«Տարվա մեջ երկու անգամ եպիսկոպոսական ժողով լինի»,—ասում է եկեղեցական հին կանոններից մեկը («Կանոնագիրք հայոց», Երևան, 1964, էջ 84, 1Ե կանոն):

Հայոց Հայրապետը սեպտեմբերի 27-ին, Վեհաբանում, ժողովի բացման առթիվ արտասանած իր խոսքում, գոհունակությամբ էր ողջունում ժողովի գումարումը և բարե-

մաղթում, որ «այս ժողովը իրավ ներշնչումներով համակված, մտածե ու գործե իբրև մեկ ու անբաժանելի հոգևոր մարմին», մեր ալիանդությանց, կարգ ու կանոնների լույսի ներքո, ինչպես նաև ժամանակի պահանջների և հանգամանքների համաձայն, որպեսզի քրիստոնեական ոգով, համերաշխ ու խաղաղարար մթնոլորտում, իմաստությամբ և հեռատեսությամբ ուսումնասիրվեն «Օրակարգի հարցերը բազմակողմանի քննարկմամբ, եզրակացությանց հանգին և զանոնք ներկայացնեն Ամենայն Հայոց կաթողիկոսին ի կանոնական տնօրինում»:

Եպիսկոպոսաց ժողովի օրակարգում դրված 9 հարցերը կարևոր, այժմեական և հրատապ խնդիրներ են, որոնցից ոմանք նույնիսկ բարդ, «կապված տազնապալի կացությանց հետ, կացություններ՝ որոնք տկարացուցած են մեր եկեղեցին և հաճախ տառապալից դարձուցած անոր կյանքը»,—նշում է Հայոց Հայրապետը դառնությամբ:

Վեհափառ Հայրապետը Իր բացման խոսքի մեջ նշում է նաև եպիսկոպոսաց ժողովում սումվելիք որոշումների տարողությունն ու սահմանը, թե «ինքը գոհունակությամբ և զեմհատանքով պիտի ընդունի եպիսկոպոսական ժողովի եզրակացություններն ու որոշումները, և եթե անոնք սպառնչ չափով բանաձևված նկատվին եկեղեցական-կանոնական տեսակետե, պարտն ու պատշաճը պիտի տնօրինե Իր հայրապետական իշխանությամբ, գործադրության վճիռ արձակելով կանոնական կոնդակով, ի հարկին զանոնք նախօրոք ազգային-եկեղեցական ժողովի հավանության եմթարկելով մոտ ապագային»:

Եպիսկոպոսաց ժողովը հայրապետական այս թելադրանքի ոգով, վեց օրերի մեջ և հաջորդական ինը ցիստերում, քննության է առել օրակարգի հարցերը և ընդունել հաշվառատասխան գործնական որոշումներ, որպեսզի «մեր հիմնավորք եկեղեցին, արդի աշխարհի մեջ իր գոյության իրավունքը և կենդանությունը պահպանե, գործոն կերպով իր առաքելությունը շարունակելով նախ իրեն հանձնված ժողովրդի ծոցին մեջ, ապա նաև բոլոր եկեղեցիներու համաշխարհային շարժումին մեջ», — շեշտում է Հայոց Հայրապետը:

Օրակարգի հարցերից մի քանիսը սպառնիչ կերպով լուսաբանվեցին և այդ առթիվ արձանագրվեցին համապատասխան եզրակացություններ: Այլ հարցեր էլ ժողովական որոշումով կենթարկվեցին հանձնաժողովի քննության՝ բերվելու համար հաջորդ եպիսկոպոսաց ժողովին:

Եպիսկոպոսաց ժողովի օրակարգի առաջին և կարևոր հարցը հայ եկեղեցու բարեկարգության հարցն էր:

Հայ եկեղեցու բարեկարգության հարցը սեղանի վրա է դրված 1860-ական թվականներից սկսած: Այդ մասին շատ է գրված և գրվում է նաև այսօր հայ մամուլում: Գևորգ Դ, Նրբյան Հայրիկ, Գևորգ Ե, Նորեն Ա և Վազգեն Ա կաթողիկոսները զբաղվել են այդ հարցերով:

Մայր Աթոռում և Կահիրեում գումարված եպիսկոպոսաց ժողովները, 1956, 1958, 1962 թվականներին, իրենց օրակարգի վրա ունեցել են նաև եկեղեցական բարեկարգության հարցերը, «ի սահմանս իմաստուն խոհականության և զգուշադրության»:

Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Մայր Աթոռը լուրջ քայլերի է դիմել նվիրապետական մեր Աթոռների, եպիսկոպոսական ողջ դասի հետ համախորհուրդ, եկեղեցական բարեկարգական հարցերում: «Ամեն նորություն», — նշում է Վեհափառ Հայրապետը եպիսկոպոսաց ժողովի Իր փակման խոսքում, — հառաջդիմություն չէ անշուշտ: Նորություններ կան, որ հետադիմություն են, անկում են, նույնիսկ աչքասերում»: Որով հրահանգում է Հայոց Հայրապետը, «վերանորոգումներու մեր ճիգին և ցանկության մեջ, մենք պետք է ցուցաբերենք նաև զգուշություն և ոչ անապարհք»:

Հայ եկեղեցու բարեկարգության հարցը թեև հրատապ և այժմեական է, բայց միաժամանակ բարդ և պատասխանատու գործ է՝ նկատի ունենալով մանավանդ մեր եկեղեցու և ժողովրդի ցրվածությունը աշխարհով մեկ, աշխարհագրական տարբեր գոտիների մեջ, և ենթակա՝ տարբեր ազդեցությունների, մտայնությունների և հոգեբանության:

Այս ոգով առաջնորդված, եպիսկոպոսաց ժողովը քննության է առել տ. Շնորհք պատրիարքի զեկուցագիրն ու առաջադրությունները, մանավանդ Մաշտոցի կրճատման մասին, և հատկապես մկրտության, դրոշմի, պսակի, ձեռնադրության, թաղման կանոնների վերաքննությունն ու պահոց օրերի կրճատման հարցը:

Եպիսկոպոսաց ժողովը, սակայն, գործնականորեն անկարելի գտնելով կարճ ժամանակում օրակարգի բոլոր հարցերի հանգամանակից և սպառնիչ ձևով ուսումնասիրությունն ու քննարկումը, Նիշե պատրիարքի նախագահությամբ ընտրում է յոթ հոգուց բաղկացած մի հանձնաժողով և նրա վրա պարտականություն է դնում՝ մի տարվա ընթացքում քննության առնել ժողովում սպառնիչ և լրիվ կերպով չուսումնասիրված հարցերի քննարկման շարունակումն ու ամփոփումը և եզրակացությունները ներկայացնել Հայոց Հայրապետին:

1969 թվի հոկտեմբերի 11-ին, շաբաթ օրը, Վեհափառում գումարվում է հանձնաժողովի Ա նիստը, Հայոց Հայրապետի նախագահությամբ, և կատարվում է հետագա աշխատանքների բաժանում:

Վեհափառ Հայրապետը հատենի ժողովո ողջունում է հանձնաժողովի Ա նիստի գումարումը Մայր Աթոռում և իղձ է հայտնում, որ հանձնաժողովի կենտրոնը լինելով Մայր Աթոռում, կարճ ժամանակ հետո դարձյալ ս. էջմիածնում գումարվի Բ նիստը՝ քննարկելու համար մինչ այդ կատարված աշխատանքների արդյունքները:

Այնուհետև, դեկտեմբեր ամսում, Վեհափառ Հայրապետի որոշումով, Մայր Աթոռում ստեղծվում է եպիսկոպոսաց ժողովին առընթեր հինգ հոգուց բաղկացած մնայուն քարտուղարություն՝ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի ատենապետությամբ, եպիսկոպոսական ժողովում ընդունված որոշումների հետ կապված հետագա աշխատանքներին գործնական ընթացք տալու համար: Քարտուղարությունը բազմագրել է և ժողովական սրբազան հայրերին է ուղարկել եպիսկոպոսաց ժողովում կարդացված բոլոր զեկուցագրերը և ժողովի ատենագրությունը:

Վեհափառ Հայրապետի նախագահությամբ դեկտեմբերի 8-ին Վեհափառում գումարվում է մնայուն քարտուղարության Ա նիստը, որտեղ հաստատվում է նրա պարտականությունների և գործունեության ծրագիրը:

Եպիսկոպոսաց ժողովում երկարորեն քննության է առնվում նաև օրակարգի երկրորդ և ամենափշուռ հարցը՝ կուսակրոնության խնդիրը, որն ահա ավելի քան կես

դար այնքան զբաղեցրել է մեր ժողովուրդը, մամուլն ու հոգևորականությունը:

Եպիսկոպոսաց ժողովը մտքերի և տեսակետների լայն փոխանակությունից հետո մեծամասնության քվեներով որոշում է պահել կուսակրոնության ավանդական դրությունը:

Եպիսկոպոսաց ժողովում առնված կարեւոր որոշումներից մեկն էր նաև հայերեն Աստվածաշնչի գիտական բնագրի պատրաստության և հրատարակության հարցը՝ Մայր Աթոռի միջոցով Հայաստանի գիտական մի հաստատության գլխավորությամբ և սփյուռքահայ մասնագետների օժանդակությամբ: Ժողովը քննում է նաև աշխարհաբար Աստվածաշնչի նոր հրատարակության հարցը, այդ աշխատանքը հանձնարարելով Երուսաղեմի հայոց պատրիարքության:

Վեհափառ Հայրապետը եպիսկոպոսաց ժողովից հետո, վերջերս, Մայր Աթոռում ձեռնամուխ է եղել արդեն Աստվածաշնչի գիտական բնագրի հրատարակության նախապատրաստական աշխատանքներին, և շուտով Նորին Սրբության նախագահության ներքո կկազմվի մի հանձնաժողով:

Եպիսկոպոսաց ժողովը հանգամանորեն քննության է առնում նաև հայ եկեղեցու ներքին միության ամրապնդման հարցը իր Ամիստի մեջ, Հայոց Հայրապետի ներկայության:

Հայ եկեղեցուն և մեր ժողովրդին շահագրգռող կենտրոնական հարցերից մեկը Մայր Աթոռի և մեր թեմերի փոխհարաբերության հարցն է: Այդ սկզբունքից էլ բխում է փոխադարձ կապի պահպանումը Մայր Աթոռի, մեր նվիրապետական մյուս Աթոռների և թեմերի միջև: Միայն այդ կապի պահպանումով կարելի է ստեղծել հայ եկեղեցու կենսունակությունը, հոգևոր զարթոնքը և ապահովել նրա դարավոր գոյությունն ու հոգեվոր-ազգային առաքելությունը նաև այսօր և վաղը:

Ծանոթ են բոլորին 1956 թվականից սկսած Անթիլիասի կիլիկյան Աթոռի ստեղծած եկեղեցական տազնապը ու նրա պատմությունը, որոնց տխուր հետևանքով երկփեղկվեցին ազգն ու եկեղեցին:

Ծանոթ են նաև այդ տազնապի խաղաղ ու դրական լուծման նվիրված Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի առաջարկները, խաղաղասիրական կոչերն ու ջանքերը, որոնք, դժբախտաբար, մինչև այսօր մնացին «ձայնի բարբառող յանապատի»:

Եպիսկոպոսաց ժողովի գումարման նախօրյակին Հայոց Հայրապետը հրավեր ուղղեց նաև Անթիլիասի կիլիկյան Աթոռին՝ մասնակցելու և Էջմիածնում եպիսկոպոսաց ժողովին: Անթիլիասի գահակալը Հայոց Հայրապետի օգոստոս 31 թվակիր նա-

մակի հիման վրա որոշում էր մասնակցել եպիսկոպոսաց ժողովին կիլիկյան Աթոռի հինգ եպիսկոպոսներով. բայց, վերջին րոպեին Անթիլիասը հրաժարվում էր մասնակցելուց:

Եպիսկոպոսաց ժողովը քննության առնելով նաև հայ եկեղեցու ներքին միության ամրապնդման հարցը, անհրաժեշտ էր գրտնում շարունակվող տարակարծությունների վերացումը հօգուտ և ի շահ հայ եկեղեցու և մեր ժողովրդի, և մտքերի լայն փոխանակությունից և խորհրդակցությունից հետո միաձայն ընդունում էր հետևյալ բանաձևը.

«Ժողովն ցավով կարճանագրե Տանն Կիլիկիո կաթողիկոսի և իր եպիսկոպոսներուն բացակայությունը եպիսկոպոսական ժողովին, ուր եղբայրական սիրտ ոգով կրնային քննարկվի և լուծվի գրավված թեմերու հարցը և այն բոլոր հարցերը, որոնք արգելք կհանդիսանան Ամենայն Հայոց Հայրապետության և Կիլիկիո կաթողիկոսության համերաշխ և անկեղծ գործակցության, ի պայծառություն Հայց. եկեղեցվո և համարացումն անոր ներքին միության»:

Այստեղ արձանագրենք միայն, որ եպիսկոպոսաց ժողովի որոշման համաձայն Վեհափառ Հայրապետը Իր 1969 թվականի նոյեմբեր 30 թվակիր նամակով նորից դիմեց Տ. Խորեն Ա կաթողիկոսին, որ Մայր Աթոռում հանդիպումների և բանակցությունների միջոցով հարթվեն վիճելի բոլոր հարցերը:

Եպիսկոպոսաց ժողովում քննության են առնված նաև օրակարգի մյուս հարցերը: Այս առթիվ ընդունված որոշումները ցույց են տալիս, որ ժողովը միշտ ձգտել է պահպանել մեր եկեղեցու դարերով նվիրագործված կարգն ու կանոնը, ավանդությունները՝ իրենց ոգուն և սկզբունքների մեջ, նկատի ունենալով նաև ժամանակի պահանջները, սակայն միշտ զգուշավորության և հետադարձության պայմաններում:

Օրինակ՝ եպիսկոպոսաց ժողովը «Ա. Զատիկը անշարժ և հաստատուն օր մը տոնելու» օրակարգի հարցի առիթով, ընդունում է հետևյալ որոշումը.

«Երբ քրիստոնյա եկեղեցիները համաձայնին և. Հարության տոնը կատարել անշարժ և հաստատուն օր մը, հայ եկեղեցին ևս կմիանա որոշումին և Զատիկը կտոնե տարվան անշարժ և հաստատուն օր մը, ապրիլի երկրորդ կամ երրորդ կիրակին»:

«Հայ եկեղեցին և Էկումենիզմ» հարցի վերաբերյալ եպիսկոպոսաց ժողովը իր վստահությունն ու համակրանքն է արձանագրում այն ջանքերի համար, որոնք կատարվում են Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կողմից, է՛լ ավելի ամրապնդելու համար եղբայրական ոգին և դրական համագործակ-

ցությունը քույր եկեղեցիների միջև:

Եպիսկոպոսաց ժողովը քննության առնելով 1846 թվին Կ. Պոլսի տ. Մատթեոս պատրիարքի բանադրանքը հայ եկեղեցուց բաժանված մի խումբ բողոքականների դեմ, արձանագրում է, որ այդ բանադրանքը «ժամանակի և տեղվույն հետ կասկած հարց է» և այժմ անհրաժեշտ է գտնում «քաջալերել դեպի սեր և միություն ամեն ձեռնարկ հայ եկեղեցվո և հայ ավետարանական համայնքներու միջև»:

Մայր Աթոռում գումարված հանձնաժողովի հոկտեմբեր 11-ի նիստում ընթերցվում է Կալիֆոռնիայի հայ ավետարանական երկու միությանց 15 մայիս թվակիր համակը՝ Վեհափառ Հայրապետի ուղղած նույն հարցի վերաբերյալ, և նկատի ունենալով, որ հայ բողոքական համայնքները չունեն կենտրոնական վերին մի մարմին, որի հետ կարելի լիներ հարաբերությունների մեջ մտնել, ընտրում է երեք հոգուց բաղկացած մի ենթաժողով՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և Լիբանանում, տեղվույն վրա կապ պահպանելու համար ավետարանական կենտրոնների հետ և բանակցությունների արդյունքը հաղորդելու Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետին:

Ժողովը որոշում է նաև անփոփոխ պահել, որպես հայ եկեղեցու դավանության մաս, ձեռնադրության Մաշտոցում նգովքների շարքը:

Եպիսկոպոսաց ժողովի օրակարգի կարելիոր հարցերից մեկն էր նաև 1915 թվականի Ապրիլյան եղեռնի հայ նահատակների սրբաքանդ հարցը: Եպիսկոպոսաց ժողովը նկատի առնելով սույն հարցի կարևորությունը, որոշում ընդունեց այն հանձնարարել հանձնաժողովի հատուկ քննության, որ նաև կազմի և Վեհափառ Հայրապետին ներկայացնի վավերական և ստույգ վարքագրություններ և ուսումնասիրի՝ քույր եկեղեցիներում սրբաքանդ կարգը:

Եպիսկոպոսաց ժողովը նաև որոշում է՝

1. Ս. պատարագի ժամանակ քահանայի ծածուկ աղոթքի մեջ հիշատակել հայ նահատակներին:

2. Խնդրել Վեհափառ Հայրապետին, որ նոր կիրակիի փոխարեն կոնդակով, ապրիլ 24-ը հայտարարվի որպես հիշատակի իսկական օր «բիրտարո նահատակացն մերոց որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի»:

Եպիսկոպոսաց ժողովում ընթերցվում է

նաև «Հայ եկեղեցին և աշխարհի խաղաղության ամրապնդում» հարցի շուրջ մի գեկուցագիր, որը հրատարակվել է աստագյի 1969 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր միացյալ համարի 37—41 էջերում:

Ժողովը որդիական իր հարգանքն ու գնահատանքն է արտահայտում Հայոց Հայրապետի կատարած խաղաղասիրական, հայրենասիրական գործունեության անթիվ և արձանագրում միաձայն հետևյալ բանաձևը.

«Մենք պատվեր կուտանք մեր եկեղեցվո սպասավորներուն և հավատացյալներուն արթուն և արտեռանդն կերպով պաշտպան կանգնիլ աշխարհի խաղաղության, ժողովուրդներու բարեկամության և պետություններու համերաշխ գործակցության դատին, իրավունքի, արդարության և ազատության նվիրական սկզբունքներու լույսի ներքո»:

Հոկտեմբերի 2-ին ժողովը ավարտում է իր աշխատանքները, որոնք անցել են շինարար և համերաշխ մթնոլորտում, հոգևոր գիտակցության բարձր մակարդակի վրա: Ժողովում առնված որոշումներն ու արված առաջարկները եղել են իմաստությամբ, լավատեսությամբ, պատասխանատվությամբ խորունկ զգացումով:

Մարթելի է, որ մինչև հաջորդ եպիսկոպոսաց ժողովի գումարումը, երկու տարի հետո, առկախ մնացած քոյր հարցերը սպառնալից կերպով ուսումնասիրված լինեն և հանգամանորեն քննված, պատրաստ՝ եպիսկոպոսաց ժողովի վերջնական եզրակացությունների համար:


Եպիսկոպոսաց ժողովի փակման անթիվ արտասանած իր օրհնության և գնահատանքի խոսքի մեջ Հայոց Հայրապետը նշում է.

«Բայց մանավանդ ամեն բանե վեր պետք է դասենք մեր եկեղեցվո ներքին միության և կարգապահության ամրապնդումը...»:

Մենք եպիսկոպոսներս հատկապես պետք է արթուն հսկիչներ ըլլանք՝ մեր ներքին միասնությունը և մեր Ընդհանրական Հայրապետության հեղինակությունը պահպանելու, որովհետև Հայրապետության հեղինակությունը ձեզմե ամեն մեկիդ հեղինակությունն է անձնապես, ինչպես նաև ձեր բոլորիդ հեղինակությունը Մայր Աթոռին հեղինակությունն է:

Մենք անբաժանելի ենք մեկս մյուսին»:

Արժան և իրավ:



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ,
 ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
 ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ,
 Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԲՈՒՅՐ ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻ
 ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ
 ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական կաթողիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Սրբություն
 ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հոռմ),

Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական պատրիարք, Նորին Սրբություն
 ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք, Նորին Սրբություն
 ԱԼԵՔՍԻԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի պատրիարք, Նորին Սրբություն
 ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Ղպտի ուղղափառ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
 ԱԲՈՒՆԱ ԿՅՈՒՐԵՂ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Երուսաղեմի հունաց պատրիարք, Նորին Սրբություն
 ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),

Անտիոքի և համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
 ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ-ԻՆ (Դամասկոս),

Անտիոքի և համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
 ՄԱՔՍԻՄՈՍ Ե-ԻՆ (Բեյրութ),

- Անտիոքի սիրիական կաթոլիկ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Ա. Հ Ա Յ Ե Կ Բ - Ի Ն (Բելյուրթ),
- Սիրիական օրթոդոքս եկեղեցու և համայն Արևելքի պատրիարք,
Նորին Սրբություն Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Հ Ա Կ Ո Բ Գ - Ի Ն (Դամասկոս),
- Համայն Եթովպիայի պատրիարք, Նորին Սրբություն
Բ Ա Ս Ի Լ Ի Ո Ս Ի Ն (Ադիս-Աբեբա),
- Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
Բ Ա Ս Ի Լ Ի Ո Ս Ո Ի Կ Ե Ն Ա - Ի Ն (Քոթայամ),
- Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
Ե Փ Ր Ե Մ Բ - Ի Ն (Թբիլիսի),
- Ռումին օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
Ժ Ո Ի Ս Տ Ի Ն Ի Ա Ն Ի Ն (Բուխարեստ),
- Բուլղար օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
Կ Ի Ր Ի Լ Ի Ն (Սոֆիա),
- Լիբանանի մարոնիտ պատրիարք, Նորին Սրբություն
Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Զ Ի Ա Դ Ե Ի Ն (Բելյուրթ),
- Քենտրբերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Սրբություն դոկտ. Մ Ա Յ Զ Լ Ռ Ե Մ Զ Ի Ի Ն
(Լոնդոն),
- Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
Հ Ե Ր Ո Ն Ի Մ Ո Ս Ի Ն (Աթենք),
- Սերբիայի և համայն Հարավսլավիայի պատրիարք, Նորին Սրբություն
Հ Ե Ր Մ Ա Ն Ի Ն (Բելգրադ),
- Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
Ս Տ Ե Ֆ Ա Ն Ի Ն (Վարշավա),
- Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
Դ Ո Ր Ո Ֆ Ե Յ Ի Ն (Պրագա),
- Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք, Նորին Ամենապատվություն
Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Պ Ե Տ Ր Ո Ս Ժ Զ Պ Ա Թ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Բելյուրթ),
- Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Սրբություն
Մ Ա Կ Ա Ր Ի Ո Ս Ի Ն (Նիկոզիա),
- Նորին Ամենապատվություն կարդինալ
Ա Ղ Ա Զ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Վատիկան),
- Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. Է. Բ Լ Ե Յ Կ Ի Ն (Ժնև),
- Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդ
Լ Ո Ր Ի Ս Տ Ո Ն Լ Ե Վ Ի Ն Գ Ս Տ Ո Ն Ս Զ Ե Յ Ժ եպիսկոպոսին
(Նյու-Յորք),

Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ ԺՐԱՆՅՔՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),
Լատվիական ՍՍՀ ավետարանական-յութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Սրբազնություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ ավետարանական-յութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Սրբազնություն ԱԼԺՐԵԴՅՈՈՄԻՆԳԻՆ (Տալլին),
Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բելրութ),

Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
Ն. ԷՐՄԻՆԻՈՌՈՆԿԱՐԻՆ (Երուսաղեմ),
ԱՄՆ-ում Քրիստոսի եկեղեցիների ազգային խորհրդի ընդհանուր քարտու-
ղար, Գերապատիվ հայր ԷՐՈՒՆ ԷՍԹԻՆ (Նյու-Յորք),
Մոնակոյի եպիսկոպոս, Գերաշնորհ ԺԱՆՌԵՆԻՊԻՆ (Մոնակո),
Մխիթարյան ուխտի արքահայր, Գերապայծառ հայր
ՀՄԱՅԱԿ ՎԱՐՊԱԿԵՆ ԿԵՏԻՎՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի արքահայր, Գերապայծառ հայր
ՄԵՍՐՈՊ ՎԱՐՊԱԿԵՆ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (Վիեննա),
Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱՃՅԱՆԻՆ (Մարսել):

Գոհություն կուտանք Աստուծո Ամենակալին որ այժմանի կկացու-
ցանե Մեզ անգամ մը ևս հոգեկան ցնծությամբ դիմավորելու Քրիստոսի սուրբ
Ծննդյան ավետիսը և նույն հոգեկան ցնծությամբ Ձերդ Սրբության ներկա-
յացնելու Մեր շնորհավորությունները և սիրալիր մաղթանքները Ձեր քաջա-
ռողջության և ձեր սուրբ և մեծ եկեղեցվո ծաղկումին համար:

Թող Աստված զորացնե Ձերդ Սրբությունը որպեսզի նույն ոգեկան քա-
ջությամբ շարունակեք Ձեր առաքելությունը ի փառս Քրիստոսին, Փրկչին
աշխարհին, որպեսզի երկնային սիրո և խաղաղության շունչը համայն մեր
օրերու համայն մարդկությունը և մարդիկ ու ազգություններ ապրին ու զոր-
ծեն իբրև եղբայրներ, զիրար հարգելով և իրարու օգնելով:

Այսօր երբ մեր հոգիները կլսեն երգը երկնքի հրեշտակներու, Մեր աղոթ-
քը կմիացնենք Ձերդ Սրբության աղոթքներուն՝ որպեսզի մարդկային աշխար-
հին մեջ աճին ու զորանան՝ խաղաղությունը, արդարությունը և եղբայրու-
թյունը:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԱՐԻԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. ԷԶՄԻԱԾԻՆ

ԾՆԹ.— Պատասխան հետազոտող կտպագրվեն հաջորդ համարում:



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ
ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ա. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա.-ԻՆ (Անթիլիաս),

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),

ԹՈՒՐԻՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),

ԲԱՐԵՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Պարգևատում բարյաց, իր անբավ ողորմությամբ անցյալ տարվա ընթաց-
քում արժանի արեց մեր սուրբ եկեղեցին և մեր ժողովուրդը համայն՝ ի Հա-
յաստան և ի սփյուռս աշխարհի, ապրելու և գործելու՝ խաղաղության և շինա-
րար զարգացման պայմանների մեջ, իսկ այժմ քաղցրությամբ ու հոգու ցըն-
ծությամբ ողջունելու աշխարհաշեն ավետիսը Քրիստոսի հրաշալի ծննդյան:
«Փառք, պատիւ և երկրպագութիւն՝ Փրկչին մերոյ՝ Միածին Որդւոյն Աստու-
ծոյ»:

Այս մեծ ավետիսը Մենք Ձեզ ենք բերում մեր երանելի Հոր՝ սուրբ Գրի-
գոր Լուսավորչի գահից, օրհնելով ձեր թեմը և ձեր եկեղեցիները, ձեր թեմա-
կան ու ծխական ժողովներն ու համայն Մեր հավատացյալ զավակներին,
մաղթելով բոլորին արևշատ երջանիկ ու խաղաղ տարիներ, աստվածահաճո
և ազգաշեն Ձեր գործոց լիակատար հաջողությամբ:

Քրիստոսի ծննդյան շնորհներով, թող խաղաղություն լինի աշխարհի վրա և հաճություն ի մարդիկ:
 Շնորհավոր Նոր տարի և սուրբ Ծնունդ:
 Խաղաղություն և սեր և երկմտաք բարիք եղիցին ընդ Ձեզ այժմ և հավիտյան, ամեն:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանը և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչությանը (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալությանը (Լիսաբոն), Աբգարյան ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուտերտուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

Շնորհագարդ Եղբայր ի Քրիստոս,
 Նոր տարվան և Փրկչի ս. Ծննդյան հրաշալի տոնի առթիվ Ձերդ Ա. Օծության կներկայացնենք Մեր սրտալից և ջերմ շնորհավորություններն ու լավագույն մաղթանքները:

Ի խորոց սրտի կաղոթենք, որ բարձրյալն Աստված պարգևե Ձեզի քաջատուջ և երջանկալից երկար կյանք և լիակատար հաջողությամբ պսակե Ձեր եկեղեցանվեր բոլոր ճիգերն ու ջանքերը:

Թող Աստված հարցն մերոց անշարժ և անասան պահե ու պահպանե Հայց. ս. եկեղեցին և բարգավաճ ու ծաղկյալ կյանք պարգևե հավատացյալ հազ ժողովուրդին ի սիյուս աշխարհի:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիլ, աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո

Անթիլիաս

Նոր տարվա և ս. Ծննդյան տոների ուրախ առթիվ խորին հարգանքով ներկայացնում ենք Ձեզ, Մեր և Սրբոց Հակոբյանց միաբանության անունից, սրտագին շնորհավորություններ և բարեմաղթություններ:

Թող ամենակարողն Աստված պարզի Ձերդ Սրբության քաջատոջություն և բազում երջանիկ տարիների հաջողություն. բարօրություն ու անսասանություն՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնին:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարք հայոց Երուսաղեմի

Երուսաղեմ

Վեհափառ Տեր,

Աստվածահալոնությունը միշտ կրկնվող հուշարարն է աստղի խորհուրդին, այսինքն մեր չգոհացված պապակին արդարության և ճշմարտության: Մյուս կողմն մշտնջենական պատգամն է անհասանելի խաղաղության: «Անհասանելի» ըսինք խաղաղության համար, վասնզի պատմությունը կրիատե, մեր առօրյան կաղաղակն ու մարգարեն կհաստատե. «Եւ ասէին խաղաղութիւն, խաղաղութիւն, եւ ոչ գոյր խաղաղութիւն» (Երեմ. Ը 11): Այս պատգամները մեզի կուգան ոչ միայն մեր սրտերուն մեջ այլևս տարրացած բաղձանքներեն, այլ հատկապես մանկացող Աստուծո մը ծնունդին հետ կապված սրբատառուչ դրվագներեն:

Ուրեմն մեր առաջին մաղթանքն է, որ շուտ մոռացող մարդկությունը հիշեր այս փրկարար պատգամները նաև տարվան ուրիշ օրերուն մեջ, որոնք զմեզ գործնականորեն դեմ հանդիման կբերեն արդարության, ճշմարտության և խաղաղության մեկտեղումին: Առանց առաջին երկուքին վերջինը անկարելի է, որ տիրապետե երկրի վրա. վասնզի արդարության հետ համբուրվելով է, որ կբեղմնավորվի խաղաղությունը: «Արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեացին» (Սաղմ. ԶԴ 11):

Ու այս բոլորը կիրականանան միայն այն ատեն, երբ համայն մարդկությունը մտնե մականին ներքև Խաղաղության հավիտենական իշխանին:

Հանգրվանային այս տոներու առթիվ կուգանք համայնքովին նախ վերանորոգելու մեր սերը և հարգանքը Վեհիդ. նկատմամբ և մեր հարումը Մայր Աթոռին հանդեպ: Ապա սրտագինս շնորհավորելով կմաղթենք Ս. Օծությանդ շնորհավոր Ամանոր և շնորհաշատ տարիներ:

Մատչելով ի համբույր Օծելուդ ս. Աջին, խոնարհ աղոթակից՝

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարք հայոց Թուրքիո

Ատամբուլ





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՁ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ
(1970 թ. հունվարի 6)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ամեն:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Ամեն անգամ երբ կբացվին դռները Նոր տարվուն, մեր հուսատենչ հոգիները կապանեն, որ հեռու բարձունքներեն իջնեն երգը երկնքի՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այդպես եղավ ծնունդը մեր Փրկչին Հիսուսի Քրիստոսի շատ դարեր առաջ: Այդպես կդիմավորենք մենք ևս այսօր, հիշատակը հրաշալի ծնունդին, որ մեր հոգիներուն կբերե քաղցր արձագանքը նույն երկնային պատգամին՝ «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Հիսուսի ծնունդով, աշխարհի պատմութիւնը երկուքի բաժնվեցավ: Պատմութիւն Քրիստոսէ առաջ, պատմութիւն՝ Քրիստոսէ հետո: Հիսուսի ծնունդով սկիզբ առավ մեծ հեղաշրջումը քաղաքակիրթ մարդկութեան կյանքին:

Արդարև, քրիստոնէութիւնը ընդունող բոլոր ժողովուրդներու պատմական իրազօրծումներու կեդրոնը, կհանդիսանա Քրիստոսի խոսքը: Գրականութիւնը, դպրութիւնն ու արվեստներ, հասարակական հարաբերութիւններ, օրենսդրութիւն, բարոյական ըմբռնումներ, նույնիսկ ճշգրիտ գիտութիւններ, այդ խոսքով դարեր շարունակ մարմին ու կյանք ստացան, կատարելութեան կատարներու հասնող նոր համադրութիւններու և ներդաշնակութիւններու մեջ:

Մեր ազգն ալ կպատկանի այդ ժողովուրդներու ընտանիքին: Ավելի քան տասնևհինգ դարեր, հայ ժողովուրդը կառուցեց, տքնեցավ, ստեղծագործեց ու մարտնչեցավ, իբրև շողախ ունենալով Քրիստոսի Ավետարանի լույսը: Նոր հավատքին հուրով՝ հայոց ազգը ևս վերածնավ, պայծառակերպվեցավ, հանճարացավ:

Նույն հավատքի հուրով վերածնան բոլոր այն ազգերը որոնք զՔրիստոս առին իրենց սրտերուն, իրենց հոգիներուն մեջ: Պենտեկոստէին, վերնատան մեջ սկիզբ առած հոգևոր զարթոնքը, ոգեկան լուսակերպումը, տարածվեցավ երկրն երկիր, շարունակվեցավ, աճեցավ սերունդէ սերունդ և հեղաշրջեց աշխարհը համայն:

Ինչպե՞ս բացատրել հրաշալի այս իրողութիւնը: Աստվածային տնօրի-

նությունը ի՞նչ ճանապարհով բարձրացուց մարդը այդ կատարներում: Մենք հավանք ենք հավատալու թե այդ հեղաշրջումը կատարվեցավ և կշարունակվի կատարվի, վասնզի Հիսուս եկավ մարդուն ըսելու՝ դու ես տիեզերքին ու կյանքին կեղորոնը, դու ես տիեզերքին ու կյանքին իմաստը, դու ես տիեզերքին ու կյանքին նպատակը:

Հիսուսի շունչով, փլամ հին աստվածները և կուտքերը բոլոր, որոնք անհիշատակ ժամանակներն ի վեր՝ մարդը կառահեին բնապաշտական հավատալիքներու սարսափին ներքև, դիվային երևակայությամբ հնարված մոլորությունաց խավարին մեջ, ստրկատիրական դաժան օրենքներով շղթայված:

Հիսուս եկավ ազատ արձակելու մարդը՝ բոլոր նախապաշարումներեն, բոլոր մոլորություններեն, բոլոր կապանքներեն, բոլոր շահագործումներեն:

Հիսուսով ազատ մարդը դարձավ Աստուծո որդի և ժառանգորդ երկնից արքայության, դարձավ Արարչին գործակից, աստվածային ստեղծագործությունը շարունակող ուժ երկրի վրա, իր նմաններու աշխարհին մեջ:

Հիսուս չի ժխտեր նյութական տիեզերքը անհուն, անսկիզբ ու անվախճան, չի ժխտեր մեզ շրջապատող բնությունն ու օրինաչափ օրենքները անոր, չի ժխտեր մարմնեղեն ու հոգեղեն բնությունը մարդուն: Ան կհաստատե այդ բոլորը, կփառաբանե այդ բոլորը, կվսեմացնե այդ բոլորը, կներդաշնակե ու կիմաստավորե զանոնք՝ մեկ ու Գերագույն Արարիչ ուժի մը հայտնությամբ ու հռչակումով, որ է «Աստուած, Հայրն մեր ամենակալ, Արարիչն երկնի և երկրի, երևելաց և աներևոյթից»:


Քրիստոնեական ըմբռնումով, համայն ստեղծագործության կեղորոնը կհանդիսանա մարդը, որ իր իսկ հոգիին մեջ, կարող է արտացոլել աշխարհը, տիեզերքը ամբողջ և արքայությունը երկնքի: Այո՛, նաև արքայությունը երկնքի, իբրև բարոյական տենչանք, որուն անոթը կհանդիսանա մարդուն պարզեկված Աստուծո մեծագույն շնորհը՝ հոգին, գերագույն վկայությունը մարդու մարդկայնության և նմանության Աստուծո:

Այն արարչագործ սերը, որով Աստված տիեզերքը ստեղծեց և շունչ տվավ անոր, կհայտնվի, կբյուրեղանա ու կգործե նաև մարդուն հոգիին մեջ: Մարդը այդ սիրույն մեջ և այդ սիրով է մանավանդ որ կգտնե, կճանչնա ու կիրականացնե ինքզինքը իբրև Աստուծո որդի, կհայտնաբերե իր կյանքին իմաստը, իր կոչումը երկրի վրա, ու կգտնե ճանապարհը դեպի աստվածանաչում, դեպի անմահություն, դեպի երկնից արքայություն:

Այս խոհերով, այս ապրումներով, կոյնավորենք մենք այսօր ավետիսը Քրիստոսի ծննդյան և մեր սրտերը անգամ մը ևս լայն կբանանք, ընդունելու համար երկնային պատգամը սիրո և խաղաղության, պատգամ՝ որ հոգին իսկ է Քրիստոսի Ավետարանին: Մերը դեպի մեր նմանները և խաղաղարարությունը մեկը մյուսով կպայմանավորվին, մեկը մյուսով կամբողջանան, մեկը մյուսով կկենսագործվին:

Այս բոլորով հանդերձ սակայն, եթե պահ մը դիտենք մեր շուրջ, կտեսնենք թե մեր օրերու մարդը տակավին հեռու է հավատարիմ մնալէ իր ճշմարիտ կոչումին, իր ճշմարիտ առաքելության: Հեռու է կատարելապես Աստուծո որդին ըլլալէ, և իր նմանները բոլոր, իբրև իր հարազատ եղբայրները դավանելէ: Այլապես ինչպե՞ս հնարավոր պիտի ըլլար Վիետնամի սպանդը, ինչպե՞ս հնարավոր պիտի ըլլար պետությանց սպառազինության արշավը և տակավին այնքան տագնապալի կացություններ որոնք կապառնան համաշխարհային նոր պատերազմ շղթայագերծելու:

Բայց անա երկինքը վերստին կբացվի այսօր: Մարդիկ մանկացած հո-



գիմերով իրենց հալացքը կհառեն դեպի վեր, վերանորոգվելու իղձով, պաշտառակերպվելու տենչով, փրկության ճամփա մը գտնելու հույսով, ու հավերժ-տակված կլսեն երգը հրեշտակներու՝

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Կզգանք, կերպենք թե Աստուծո ռդորմությունը, Աստուծո ամենակարող ուժը օգնության կհասնին մեզի իբրև փրկարար լաստ:

Սիրելի հավատացյալ զավակներ Մեր, քաջալերվեցեք, գոտեպնդվեցեք, միացեք Քրիստոսով և հայոց պատմության ոգիով, մնացեք լավատես ու անսասան, հավատացեք երկնքին, հավատացեք Հիսուսի ծննդյան շնորհներուն, հավատացեք սիրո և խաղաղության ավետիսին, հավատացեք բարիին ուժերուն հաղթանակին, հավատացեք արդարության ժամին: Եղեք մահ արթուն պահակներ և անդուլ աշխատողներ՝ ամեն օր, ամեն ժամ, առավել հզորացնելու համար աշխարհի խաղաղության պաշտպան ուժերը, առավել ամրապնդելու եղբայրության գիտակցությունը բոլոր ժողովուրդներուն միջև:

Հատկապես այս վերջին տարիներուն, ի տես մարդկային իմացական հանճարի հիասքանչ նվաճումներուն, Մենք կհավատանք թե՛ մարդիկ ինչքան ավելի սլանան դեպի տիեզերական տարածություններ ու մերձեան երկնքին, այնքան ավելի պիտի ճշմարտվի սաղմոսերգուի ներշնչված խոսքը՝ «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»: Երկրածին մարդիկ ավելի մոտենալով երկնքի բարձունքներուն, ավելի պիտի կարողանան զգալ մեծ խորհուրդը տիեզերքին ու ստեղծագործության: Անոնց մեջ ավելի պիտի պայծառանա մահ մամարդկային միասնության գիտակցությունը: Անոնք ավելի պիտի ճանչնան ինքզինքնին իբրև որդիները տիեզերքի արարչին, պիտի ճանչնան զիրար իբրև եղբայրներ, մույն գոյության իմաստով, մույն ճակատագրով, մույն կոչումով:

Հակառակ մեզ տակավին շփոթեցնող բազում երևույթներու և կացություններու, մենք կհավատանք թե մարդկությունը արագ քայլերով կմոտենա հայտնաբերելու և իմաստավորելու՝ Աստված, աշխարհ, մարդ իմացությունները տիեզերքի օրինաչափ ներդաշնակության մեջ:


Արդ, աղոթենք որ Փրկիչը մեր Քրիստոս, իր աստվածային սիրով անեցնե լույսը ճշմարիտ ճանաչողության և շերմացնե սրտերը բոլոր, որպեսզի մարդիկ ու ժողովուրդներ կարողանան ձերբազատվիլ ամեն կարգի մախապաշարումներէ ու կապանքներէ, և իրենց ազատ հոգիներով բարձրանալ դեպի կատարները երկնային ներդաշնակությանց, որով միայն պիտի գտնեն անոնք՝ խաղաղության ու երջանկության լուսեղեն ճամփան երկրի վրա:

«Եւ հովիւքն էին ի տեղուջն յայնմիկ բացօթեազբ... Եւ հրեշտակ Տեառն երևեցաւ մոցա և փառք Տեառն ծագեցին առ մոռա... Եւ ասէ ցնոսա հրեշտակն՝ մի երկնչիք՝ զի ահաասիկ ստետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն: Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ որ է օծեալ Տէր... Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բացմութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱստուած և ասէին՝ փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Խաղաղություն, խաղաղություն աշխարհին համայն, ժողովուրդներուն բոլոր:

Ամենայն հայոց հավերժական սուրբ Էջմիածնեն՝ խաղաղություն և օրհնություն եկեղեցվույս Հայաստանայաց և սիրեցյալ համայն ժողովրդյան մերո որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, այժմ և հավիտյան. ամեն:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ
ՏԱԺԱՐՈՒՄ, ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հունվարի 6-ին, երեքշաբթի, «Տօն ծնրկեալ» և մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի»:

Ինչպէս միշտ, այս անգամ ևս ավանդական շուրջով և հանդիսավորութեամբ տոնվեց աստվածահայտնութեան տոնը Մայր Աթոռում:

Առավոտյան ժամերգութիւնը Մայր տաճարում պաշտօնեց առանձին հանդիսավորութեամբ՝ մասնակցութեամբ Մայր Աթոռի ողջ միաբանութեան և ճեմարանի ուսանողութեան: Մայր տաճարի զանգերի դողանքների ներքոյ և էջմիածնի հիմնավորք և խնկարույր կամարների տակ հնչում են ծննդյան հոգեգմայլ շարականները՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի...», «Այսօր տօն է տուրք Ծննդեան»:

«Բրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Մայր տաճարը լեցուն էր աղոթավոր հաւաքատեցաւորների և ուխտավորների բազմութեամբ: Աջակողմյան դասում տեղ էին գրավել Գերագույն հոգեւոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, հոգեւոր ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտօններունն ու բազում այլ հրավիրյալներ:

Ս. պատարագին ներկա էին նաև Հարավային Ամերիկայի և Գրիգոր Լուսավորիչ հայկական երկրորդական վարժարանի տեսուչ տ. Հարություն վրդ. Մուշեղը՝ վարժարանի շրջանավարտ հինգ սաներով:

Ժամը 11-ին Վեհաբանում պատրաստ էր եկեղեցական թափորը: Վեհափառ Հայրապետը ամփոփանու տակ առաջնորդվում է

տաճար՝ մատուցելու և Ծննդյան հանդիսավոր պատարագ:

Պատարագի ընթացքում և սեղանին սպասարկում էին տ. Կոմիտաս եպիսկոպոսը, տ. Ծնորհք, տ. Նարեկ, տ. Գևորգ վարդապետները, տ. Նշան և տ. Հովհաննէս քահանաները և սարկավագների դասը:

Մայր տաճարի երգեցիկ խումբը, ղեկավարութեամբ Խ. Մելիսանեշյանի, շնորհալիորեն կատարում են ս. պատարագի եկմայան և կոմիտասյան հոգեգմայլ երգեցողությունները:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը Փրկչի հրաշափառ և Ծննդյան խորհրդի ավետիսը տալով հայ եկեղեցուն և բովանդակ հայտնութեան, խոսում է Իր բովանդակալից և շինիչ քարոզներից մեկը (Քարոզը տպվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 16):

Հայրապետական սույն քարոզը նույն երեկոյան հաղորդվում է նաև Երևանի ճաւահարանից:

Հաւարտ և պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսատրութեամբ, կատարվում է Զրօրհնյաց սրբազան կարգը, Ավագ սեղանի բեմի վրա՝ ի հիշատակ Բրիստոսի մկրտութեան Հորդանան գետում:

Սրբազան արարողություններից հետո հավատացյալները, հավատով ու երկյուղածութեամբ, կարգով մոտենում են ու սրվակներով ու շշերով վերցնում օրհնված ջուր:

Եկեղեցական արարողութեան ավարտին Վեհափառ Հայրապետը նույն թափորով առաջնորդվում է Վեհարան, ուր ընդունում է շնորհավորություններ օրվա տոնի առթիւ:



ԵՆՈՐՀՔ ՎՐԴ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

(Տեսուչ հոգևոր նամարանի)

ՊԱՀՈՑ ՕՐԵՐ

(Պատմական մոտեցում)

Պահքի և ծոմապահության օրենքը սուրբ գրական հիմունք ունի ուր զանազան առիթներով շեշտված այդ սովորությունը: Աստվածաշունչի առաջին գիրքերեն (Ելից գլ. 34) մտերմությունը, բոլորովին զատված լլլալով նյութական աշխարհեն:

Եզրասի 10-րդ գլխուն մեջ կկարդանք ծոմապահության մասին որ կկատարվի ուրիշի մեղքերուն ապաշխարության և զղջումիս համար: Հովել մարգարե նույնը կնշե ապաշխարության դիտումով: Դանիել մարգարե նույնպես, իբրև հոգևոր պատրաստություն իր առաքելության կհրաժարի հաճելի կերակուրե՝ մասնավորաբար միս, գինի և այլն: Իսկ Մատթեոսի Ավետարանին մեջ (ԺԷ 21) մեր Տերը կթելադրե իբր գենք հաղթության 2արին դեմ: Ունիք նաև առաքելոց գեղացիկ օրինակը երբ անոնք Աստուծո առաջնորդությունը կհայցեին ընտրության և ձեռնադրության մը պարագային (Գործք ԺԳ. 2, ԺԴ. 23): Ուրիշ առիթներով ալ կհիշվի՝ ուսլածանքի և նեղությանց միջոցին, ի նշան սուգի և ապաշխարության, աղոթելով որ Տերը փորձանքներե ազատե: Պետք է շեշտել որ յուրաքանչյուր պարագային աղոթքը միշտ անբաժան կմնա, այլապես իր իմաստն ու ազդեցությունը կկորսնցնե ըլլա ծոմապահություն կամ պահք: Այս պատճառով է որ Հիսուս կդատապարտե փարիսեցիական պահեցողությունը, առանց անոր դեմ կենա-

լու, այլ ինք ալ կպահե Մովսեսի նման ու կերպով մը եկեղեցիին կձգե որ ի գործ դնե զալիք օրերու մեջ (Մատթ. Թ 15, Մարկ. Բ 18—20, Դուկ. Ե 33—35): Սուրբ Գրքի ըմբռնումով ծոմ և պահք ըսելով կիմանանք ընդհանուր կամ մասնակի ժուժկալություն ուտելիքներե և խմելիքներե: Առաքյալները նաև հետևելե զատ հասկնալի է թե որոշ սովորություն մը հաստատեցին, որով պահեցողության հրեական օրերը, որոնք երեքշաբթի և հինգշաբթի էին, փոխվեցան չորեքշաբթի և ուրբաթ օրերուն ի հիշատակ Տիրոջ մատնության և խաչելության:

Սուրբ գրական այս սկզբունքներուն վրա հիմնված կմնան արևելքի և արևմուտքի եկեղեցիները, որ շատ կանոխեն սովորություն հաստատած են: Այն համոզումը կա մինչև իսկ թե Սևծ պահքի սովորությունը Բ դարեն ի վեր ընդունված էր կարգ մը աւելորդ մեջ:

Արևմուտքի եկեղեցին ծոմի և պահեցողության դրության մեջ փոփոխություններ մտցնել փորձած է Թ դարեն սկսյալ և շարունակած մինչև ԺԲ դար և ապա մինչև ԺԶ դար հետզհետե թեթևեցնելով: Սկզբնական շրջանին շաբաթ օրերն ալ պահքի հատկացված էին բայց հետագային չորեքշաբթի և ուրբաթ օրերը բավարար նկատվեցան: Կարելի է ըսել նաև թե պահեցողության Երեմքը միշտ անգիր եղած է ու հաճախ փո-

փոխության ենթարկված՝ վայրի, ժամանակի և սովորությանց համաձայն: Նախնական շրջանին, պահեցողությանն նկատմամբ եկեղեցվո ընդունած սովորությունն էր հետումնալ բոլոր մեղքն ու կաթնեղեն ուտելիքներն ինչպես նաև հավկիթ, կարագ, ձուկ, ինչ որ հայոցս մեջ դեռ կշարունակվի: Սակայն որևէ առիթով նկատողության կենթարկվեին տեղական պայմանները, ժամանակը, չափն ու որակը, արտոնչալ կերակուրներուն առկայությամբ: 1951-ին էր որ բոլորովին բարեկարգված ու հեղաշրջյալ հոր ուղեգիծ մը որդեգրեց ԱՄՆ-ի եպիսկոպոսական հանձնաժողովը, պահելով հանդերձ հիմնական որոշ սկզբունքներ, թե՛ 7 տարեկանն սկսյալ ամեն ոք ենթակա էր պահքի օրերին, որոնք էին տարվան բոլոր ուրբալ օրերը, Միկրոց չորեքշաբթին և Տաղավարներու հախորդող օրերը մինչև նախատունակ կամ հսկում: Իսկ 21-են մինչև 59 տարեկան եղողները ենթակա էին ծոմապահության կանոնին որ կարողներ օրը մեկ ժուժ ուտել որոշ բաներ և ազատ կերպով որևէ խմելիք թեյ, կալ, պտուղի ջուր: Այս օրերը պարտադրական ըլլալն կղադրի անշուշտ երբ առողջության կամ գործելու անկարողության հարց կծագի ուն անհատի մը համար: Բաց աստի պահեցողության կանոնին փոխանակություն կընդունվեր, բարեգործությունը կամ տարբեր կերպարանքով ապաշխարության և զոհողության և ժուժկալության արտահայտություններ:

Պետք է ըսել որ հույն եկեղեցին հատկապես ընդհանուր փոփոխություններ չէ ըրած այս կանոնին կապակցությամբ: Ընդհանուր առմամբ տարվան մեջ 180 օր պահեցողություն կհաշվե: Նախապես պահեցողության պարտադրական կանոն չկար ժողովուրդին համար, պարզապես վանականներու սովորությունն էր, մանավանդ արևելքի ճգնաժամներուն մոտ ընդունված սովորությունն էր, ինչպես ս. Անտոն Ամապատական և այլ եգիպտացի վանականներ, որոնք միայն առ, հաց և ջուր կառնեին: Հետագային հավատացյալներ սկսան ընդօրինակել և ապա ժողովուրդը ազդվելով տարածվեցավ հասարակության մեջ: Մինչև այսօր հունաց մեջ այդ խիստ պահեցողությունը կտեսնվի երբեմն երբ որոշ օրերու ձեթ իսկ չեն գործածեր, իսկ հայ եկեղեցվո «աղոթհացից» ոճը մույն ծագումը ունի: 1949-ին արևելյան եկեղեցիներու համար պատրաստված սահմանադրության մը


համաձայն, ուր որոշ թույլտվություն կտրվեր կաթի և հավկիթի, կշեռվեր թե պատրիարքին ու սինդոնին կամ յուրաքանչյուր ծեսի գերագույն խորհուրդին իրավունքն է վճռել պահեցողության օրերու, ժամանակի և տեսակի վերաբերյալ հարցերը:

Հայ եկեղեցին որևէ փոփոխություն մտացուցած չէ տակավին և պահեցողության պայմանները կմնան նախնական ձևին մեջ ոչ մասնավոր տարբերությամբ մյուս եկեղեցիներեն: Տարվան բոլոր չորեքշաբթի և ուրբալ օրերը պահք են, բացառություն կազմելով Աստվածահայտության ութ օրերին չորեքշաբթի և ուրբալ օրերը: Մեծ պահքը 48 օր է շարունակ, բուն հարեկենդանի երկուշաբթի օրեն մինչև Ավագ շաբաթ օրը: Ասկե զատ տարին մոտ 10 շաբաթ պահքի օրեր են, յուրաքանչյուրը 5 կամ 6 օր հաշվելով: Եկեղեցական ծեսի ըմբռնումով պահքի օրեր են ապաշխարության օրերը, որոնց հետ կապված են ուտելիքի ժուժկալությունը, այն տարբերությամբ որ 160 օրերը կերակուրի պահքեր են իսկ մնացյալները (Օրմանյանի հաշվով 117 օրեր) ծիսական պահքեր են: Ներելի է միայն բուսական սնունդ ընդունիլ պահքի միջոցին, իսկ ձուկ, կաթ, հավկիթ կամ գինի ներելի են միայն նավակատիկներուն, որ է պատարագի ժամեն հետո:

Հայոց մոտ պահեցողությունը առողջապահական ըմբռնում ալ ունեցած է որ Վարագա խաչի և ս. Հակոբի պահքերը ծանոթ են նաև աշման ու ձմեռվան շաբաթապահքեր:

Ծոմապահության օրերը հազվագյուտ են և առհասարակ ընդունված են Մեծ պահքին և Առաջավորի շաբաթները 5-ական օր, երկուշաբթիներն մինչև ուրբալ, որ կտևե կես գիշերեն մինչև պատարագի վերջավորությունը, գգուշանալով որևէ ուտելիք և խմելիք (Օրմանյան կալվելցեն նաև՝ ծխելիք):

Պահքն ու ծոմապահությունը, որպես եկեղեցական կանոն և բարեպաշտական պարտավորություն, դարերե ի վեր նախանձախնդրությամբ պահպանված է հայոց մեջ: Սակայն վերջերս, ցավալի է նկատել թե որոշ անտարբերություն և թույլ վերաբերում մը կտիրե այս սրբազան ավանդության հանդեպ, որ այնքան բծախնդիր գտնված են մեր նախնիք, հիմնվելով աստվածաշնչական ուղղության և հետևելով աղոթանկեր սուրբերու օրինակին:



ՆԱՐԵԿ ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ

(Վամանայր և Գեղարդի վանքի)

Ա Մ Ա Ն ՈՐ . . .

Պատմության կամ հավիտենության է հանձնվում ևս մի տարի, հինը, 1969 թվականը: Եթե կա հինը, կա և նորը՝ Ամանորը. 1970 թվականը փաստորեն առաջինի՝ հինի շարունակությունն է՝ մեր կյանքի շարունակական ճանապարհին, որը մեզ տանում է դեպի մեր լուսավոր վաղը կամ ապագան:

Ամանոր է, ամեն բանի սկիզբը՝ իր առաջին օրով, ծանով ու ծամանակով: Այժմվանից չնչությանանցած վաղվա մասին գուշակություններ անելը որքան անիմաստ, նույնքան և ծիծաղելի է: Այդ մասին կխոսվի վաղը, երբ այն կդառնա իրականություն. սակայն ապագայի ծրագրերը անպայման պետք է լինեն այսօրվանից՝ մեր խորհրդածություններով հանդերձ:

Ժամանակի և տարածության մեջ Ամանորը ծամանակի տոնն է և, եթե ուզում եք՝ ինքը ծամանակը: Ահա թե ինչու ապրող ու շնչող մարդը Ամանորներ դիմավորելիս տենչացել է միշտ վերանորոգվող իր երազների լույս-իրականացումը ու վառել անչափ կանթեղներ ու լույսեր թե՛ եկեղեցուց ներս և թե՛ տոնածառերի կամ ամանորյան սեղանների շուրջ: Իսկ այդ լույսերի գունագեղությունն ու բազմազանությունը խորհրդանշել է մարդկանց երազների տարբերությունը, զգացմունքների պեպհությունը:

Հոգեկան մեծ հարստություն է երազելը, ավելի մեծ հարստություն է երազները վերանորոգել կարողանալը: Այո՛, երազներն էլ են հնանում ու կարիք ունենում վերանորոգման: Դա ինքնակատարելագործման ձգտող անհատի հոգեկան կարևոր հատկանիշներից մեկն է: Դա ճշմարտություն է նաև ընտանիքի, ազգի կամ հասարակության համար: Երազելը և միշտ երազները վերանորոգելով դարձյալ երազելը նշանակում է

այսօրվա մեջ տեսնել վաղը, այլ խոսքով՝ մեր անձուկ գոյության սահմանները անհունորեն ընդարձակել, այսօրվա սահմանափակ ժամանակի մեջ իմաստուն կերպով գալիք ժամանակները «գնել»։ «Տեսչիք,—իր խոսքն ուղղելով եփեսացիներին ասել է Պողոս առաքյալը,—որպես ճշմարտի գնացեք. մի իբրև անիմաստք, այլ իբրև իմաստունք. գնեցեք զժամանակս» (Եփես. Ե 15): Լավ է ասված. իմաստուն կերպով ժամանակը «գնել», այսինքն՝ արժեքավորել այն:

Ըստ առածի՝ ժամանակը ոսկի է: Եթե իրոք ուզենանք ժամանակին նշանակալից արժեքավորում տալ, ապա ճիշտ կլինե՞ր ասել, որ այն անգնահատելի գանձ է: Բայց ինչ էլ որ ասենք և ինչպիսի բնորոշում էլ տանք ժամանակ հասկացողությանը, միշտ այն մնում է որպես կյանքի գաղափար, որպես կյանքի չափանիշ: Ուրեմն ժամանակի շրջանակից դուրս կյանքի մասին մտածելը բոլորովին անհնարին է: Եթե կս ժամանակը, կա՛ և կյանքը, քայց մեզ պետք է նախ ժամանակը՝ իմաստուն կերպով «գնել»-ված», ապա՝ կյանքը: Արարիչը իր արարածին կյանքը տալիս է ժամանակի մեջ: Նա այն բոլորին շնորհում է հավասարապես, ժամանակի հավասար հատվածով: Արարածները որ այն «գնում» են անհավասար, և հենց դրանով էլ կյանքի պատմությունը դառնում է տարբեր: Ով կյանքում կապի լավ, քաղիս ամբողջական և խորագույն իմաստով, նրա կյանքն էլ կդառնա գեղեցիկ ու անգնահատելի, իմաստալից և արժանի պատմություն դառնալու: Այս առումով է, որ իմաստավորվում և բովանդակություն է ստանում ժողովրդական այն խոսքը, թե «կարևորն այն չէ, թե մարդը ինչքան է ապրում, այլ՝ ինչպես»: Կոմիտաս վարդապետն

24

ինչպե՞ս ապրեց, ինչպե՞ս ապրեցին մեր պատմության վիթխարի դեմքերը, որոնց սահմանափակ կյանքը նվաճում հանդիսացավ ժամանակի անսահմանության: Հավիտենականը շահվում է այսպիսի «ինչպես»-ով, կերտվում կոտորակ ժամանակներով, այլապես ի՞նչ նոր կամ ի՞նչ հին տարի: Տարիները նոր են կամ հին՝ մարդով, նրա կյանքով: Այս իմաստով է միայն, որ այս աշխարհում ապրող յուրաքանչյուր մարդու համար Ամանորը դառնում է հույս ու հույզ, ուխտ ու աղոթք, բարեմաղթություն ու շնորհավորանք: Նույն մղումով է դարձյալ, որ այսօր Հայաստանում թե սփյուռքում հայերը, ինչպես նաև աշխարհի բոլոր մարդիկ, միլիոնավոր շնորհավորանքներով, հազար ձեկներով ու հարյուրավոր լեզուներով միմյանց շնորհավորում ու, միմյանց բարի մաղթանք անելով, Աստուծո օրհնությունն են հայցում, իսկ մեր ս. եկեղեցին միշտ Ամանորի առաջին օրը ս. պատարագով է սկսում իր կյանքը, որպեսզի «Օրհնեացի և պահպանեացի... Հայրապետություն և հաճապետություն հայոց... Օրհնեացի և պահպանեացի երկիրս, անդադատան և պողաբեություն տարույս... վանքս, անապատս, քաղաքս, և գիւղս...»:

Սովորությունն է ստել՝ ժամանակավոր կամ անցավոր կյանք, այսպես է երկրի աստվածադիր օրհները: Քրիստոսն էլ այս երկրի վրա երկար չմնաց: Սակայն մեր Փրկիչը երբ աշխարհ եկավ, մեզ անցավորից բացի ցույց տվեց նաև հավիտենականի հույսն ու գաղափարը՝ երկնայինը: Քրիստոսին հավատացողներն են, որ արժանի են նրան, նրա բերանով ավետարանված մշտնջենավոր կյանքին, հանդերձյալ կյանքին: Այստեղ, մեր այս երկրային և ժամանակավոր կյանքում, այնպիսի առաքինի և իմաստավորված մի կյանք պետք է վարենք, որ նրանով արդարանա մեր հոգին, որպեսզի գեթ լինենք կորստյան մշտաբորբոք աստիճաններից և տիրանանք խոստացված երկնային անանց կյանքին: Ուստի այսօր, երբ վերանորոգիչ Ամանորը եկել է մեզ հուշելու ժամանակի և հավիտենակությունից գաղափարը, ինչու չարժանե՞լ մեր հոգիների մեջ մեզ ի վերուստ տրված աստվածային կրպակ, ինչու չապրել ավետարանական կյանքով՝ որպես հավատացյալներ, և դողալ մահվան սև ուրվականից, ինչու չապրել, չաղոթել, չստեղծագործել այնպես, ինչպես արել են մեր բարի և իմաստուն նախնիք՝ մեզ ավանդ թողնելով ոչ միայն հենց նույն Ավետարանն ու նրա հոգին, այլև իրենց առաքինի կյանքով հարստացնելով մեր պատմու-

թյունը, որը միաժամանակ պատմությունն է համաշխարհային քաղաքակրթության: Նրանք կյանքը եղել է հավիտենականի համար ապրած կյանք, իմաստուն կերպով «գնված» ժամանակի կյանք:

«գվաճած» ժամանակի վրա՝
կյանքը հոսք է ժամանակի և տարածու-
թյան մեջ: Պետք է հոսանքի դեմ լողալ իմա-
նալ՝ կոլ չգնալու համար ժամանակին: «Ով
է մարդ որ կեցցէ և ոչ մեղիցի»: Մարդ ա-
րարածը ի բնէ եկթակա է տկարությունե-
կամ սայթաքումներ ունենալու իր կյանքում:
Սակայն որպես բնական էակ, որպես աստ-
վածեղեն կերտվածք, մա ունի իր անկապ-
տելի գեները՝ հոսանքը դիմագրավելու և դե-
պի անկում չգնալու. դա մարդու հոգեկան
կորովն է, հավատքով ամեն բան հաղթելու
կամքը, նրա ջանասիրությունը, համբերու-
թյունը, միտքը: Այս ստորոգելիները ոչ միայն
հավիտենականի նախապայմանն են, այլև
նրանցով գրահավորված կյանքը հենց աչա-
տեղ էլ՝ երկրի վրա: Ուրեմն գեղեցիկ և ան-
վախճան կյանքի համար ամանորյան խոր-
հրդածություններով միշտ իմաստավորի
կյանքդ երկրի վրա և որպես քոհատոնյա
մարդ ձգտիր հավիտենականին, որովհետև
ինչպես շատ գեղեցիկ կերպով ասել է մե-
կեհափառ Հայրապետը իր զատակակա
խորհմաստ քարոզներից մեկի մեջ, «ստան-
հավետ ապրելու հույսին, մարդ կմեռնի մա-
հեկ իսկ առաջ» (1958 թ. ապրիլի 6):

Ահա մեր առջև 1970 նոր թվականը և նոր տարի՝ դեռ չստորոշված ու չնվաճված։ Տրոբեմք և նվաճեմք այն մեր անձին, ազգին ժողովրդին, եկեղեցուն, հայրենիքին և համայն մարդկությանը ընծայաբերած մեծ մտքի ու ձեռքի գործերով՝ միշտ հիշելով, որ մեր մարդկային կոչումն իսկ է ծառայել մարդկության բարօրությանն ու առաջադիմությանը, աշխարհի խաղաղությանն ու նրա քաղաքակրթությանը, քանի որ մարդիկ որ տարբեր են, բայց մարդկությունը՝ մույն Այո՛, «գնել» ծամանակը և, ինչո՞ւ չէ, դուրսն ծամանակի ամեն մի վայրկյանի վրա 1970 թվականի օրացույցի ամեն մի նոր թերթիկը պոկելով իմանանք հաշվել այդ րեքը, որովհետև օրեր հաշվելը, ըստ սովորելյան իմաստության, պոտի իմաստություն է և անհրաժեշտություն մարդու կյանքում։

Բարի գալուստ գեղեցիկ Ամանորին բարի երթ՝ նրան, և թող մեզանից յուր քանչյուրն առանձին-առանձին ասի՝ «Ժմանակը իմ հարստությունն է, ժամանակ իմ վարկաբողը»:

Շնորհավոր բոլորի հոր տարին:

ՈՒՆՏԻ ԶԱՐՈՋ*

«Զմի խնդրեցից ի Տեառնէ և գտլն
աղաչեմ, բնակել ինձ ի Տան Տեառն
գտնեմայն ատուքս կենաց իմոց»:

(Սաղմ. ԻԶ. 4)

Նվիրական այս պահին հոգիս խայտալից բերկրանքով իր աղոթածայն առաջին խոսքը՝ մաղթանքն է ուղղում առ բարձրյալն Աստված: Բահանայացմամբս, երբ ավելի հաստատուն եմ դառնում քայլերս այս ասպարեզում՝ Աստուծո ծառայության բեմի վրա, և քառասնօրյա պահեցողությունից հետո, որպես ի վերուստ ընծայված առաջին առիթ, անդրանիկ ուխտի պատարագս եմ մատուցում հավիտենականին, սրտիս և մտքիս միակամ գոհունակությունը, որպես խնկարձակ քույրներ, բարձրանում եմ առ Աստված և հոգիս իր աչքերը վեր հառած դեպի Ամենակարողն աղերսածայն մատուցում է իր առաջին հայցվածը.

«Մեկ բան միայն խնդրեցի Տիրոջից և դարձյալ աղաչում եմ, որպեսզի բնակվեմ Տիրոջ Տանը մինչև կյանքիս վերջին օրը»:

Սաղմոսերգուի համար չկար ավելի մեծ մխիթարություն, երջանկություն, քան ամբողջական նվիրումը Եհովային: Հավատավոր հոգու համար էլ չկա ավելի մեծ շնորհ, քան նվիրումը Տիրոջ Տան ծառայությանը:

Տիրոջ Տունը Քրիստոսի արյունով փրկված և գնված եկեղեցին է, հավիտենական ճշմարտության պուրը, որն առաջնորդում է մարդուն դեպի ճանապարհ, լույս և կյանք: Դա օրինաչափ մի երևույթ է, որովհետև, ինչպես Քրիստոսն ինքն է ասում, լույսը չի կարելի ծածկոցի տակ թաքցնել, որովհետև որտեղ լույս ու լուսավորություն կա, այնտեղ խավար և խավարամտություն չի կարող լինել, որովհետև ճշմարտությունը առժամանակ միայն կարող է լռել, բայց ոչ իսպառ վերանալ: Հիրավի, դա իրողություն է, և ժամանակին մեծ մտածողներից մեկը իրավացիորեն նկատել է, թե «ճշմարտությունը գե-

րեզման չի ճանաչում և թաղվելուց չի վախենում»:

Ահա, սիրելի հավատացյալներ, այդ ճշմարտությունը դուք եք, մենք ենք, այստեղ գտնվողներիցս յուրաքանչյուրը, բոլորս, որ մեկ բառով արտահայտված՝ **եկեղեցի** անունն ենք կրում: Իսկ եկեղեցին միայն այս քարաշեն կառույցը չէ: Եկեղեցի է հավատացյալներիս ամբողջությունը:

Իսկ այս քարաշեն կառույցը մի տուն է, որտեղ հավաքվում ենք մենք հավատացյալներս, որ կազմում ենք Քրիստոսի կենդանի եկեղեցին և բոլորս միաբանած Աստուծո սիրով, մեր գոհաբանությունն ենք առաքում Ամենաբարիին, որի բարությանն հետևանքն ենք մենք: Եվ քանի որ մեր հարաբերությունները շաղկապված են սիրով ու միաբանությամբ, այդ պատճառով մեր մեջ ներկա է Աստված, Նա բնակվում է մեր մեջ: Հետևաբար մենք կազմում ենք մի ընտանիք՝ գլուխ ունենալով մեր երկնավոր Հորը: Ահա, թե ինչու այս քարեղեն շենքը կամ նրա խորհուրդը փոխաբերաբար կոչվում է նաև տուն:

Այս տունն է, որ մեզանից յուրաքանչյուրի հայացքի սուղև բացում է նոր հորիզոններ, ընդլայնում է մեր հոգու և մտքի տեսլադաշտը: Այստեղ է, որ մենք հաղորդակցության մեջ ենք մտնում Աստուծո հետ: Այստեղ է, որ աղոթքի գործությամբ բացվում են մեր հոգու աչքերը, և ներհայեցողությամբ ճանաչում ենք մենք մեզ, մանրադիտակի տակ տեսնելով մեր թերություններն ու արատները՝ մենք խորշում ենք մեզանից, և ահա ծրվում է մեր մեջ զղջման գաղափարը, որի կրակե բովով անցնելիս բյուրեղանում է մեր հոգին, և մաքրվում են մեր գգալարանները: Այստեղ է, որ վշտացյալներն ու սգավորները գտնում են իրենց մխիթարությունը: Եվ, վերջապես, այստեղ է, որ ուղիղ ճանապարհից շեղված և հասարակության համար մեռած կարծված մարդիկ վերածնվում և կենդանանում են, և

* Որպես քաջակերություն և խրախույս հրատարակում ենք հոգևոր ճեմարանի շրջանավարտ և Մայր Աթոռի երիտասարդ միաբան տ. Գրիգորիս արեղա Բունիաթյանի ուխտի անդրանիկ քարոզից որոշ հատվածներ:

այնպիսիք, որոնք կյանքի մեջ նպատակ և իմաստ որոնելու ճանապարհին, ուղին կորցրած անօգնականի նման, հուսալքման եզրին էին հասել, հանկարծ իրենց առջև նկատում են լույսի մի փայտու և վերալիցքավորվում ու ավելի եռանդաշատ են դառնում:

Հայ եկեղեցին նաև դարերն է վեր կոչված է կատարելու մի այլ սրբազան առաքելություն: Այդ առաքելությունը մեր ժողովրդի ազգային նկարագրի պահպանումը և հայ սերունդներին հայի ոգի ներշնչելն ու հայացի դաստիարակություն տալն է:

Ահա այդ սրբազան տան սպասավորության և պայծառության համար, այսօր ավելի քան երբեք հարկավոր են նվիրված ու անձնորդ մշակներ, որոնք կարողանային մեր Տիրոջ արյամբ գնված այս անեղ արտի մեջ, ձեռքը մաքի վրա ամուր դրած, ուղիղ աշակերտ բանալ, որոնք առաջնորդեին մեզ դեպի խոստացյալ հավիտենականությունը:

Ահա գիտակցության այս լույսի տակ է, որ ես էլ, մեր ժողովրդի զավակներից մեկը, ոտք եմ դնում այս տան սեմից ներս՝ նրան ծառայելու ուխտով, և իմ այս ուխտի մեջ խնդրանքս է Աստծուն, որպեսզի գորավի՛հ լինի ինձ կարողությանս առավելագույնը ներդնելու իր ընտրած այս փոքրիկ ածուխ պետքերի և կարիքների համար:

Անարժանաբար, ոչ այնքան վաղ անցյալում դուրս գալով ճեմարանական լսարաններից, երբ այս վճռական քայլն եմ անում, գուցե ինձ թվում է միայն, թե ես քաջատեղյակ եմ այդ բոլոր դժվարություններին, սակայն հակառակ դրան սրտիս մեջ զգում եմ այն հոծարականությունը, որով պատրաստ եմ ետ մղելու փորձի՛ն ինձ մատուցած գրավի՛չ գայթակղությունները:

Նվիրական այս պահին գոհություն և փառք եմ տալիս ամենակարող Աստծուն, որ մարդկանց միջից հետևագույնիս ձեռքից բռնած առաջնորդեց մանկությունից ի վեր և քահանայական աստիճանին հասցնելով ահա այսօր բարձրացրեց ինձ այս սուրբ բեմը:

Որդիական շնորհակալության և երախտագիտության խոսք ունեմ ուղղված ազգիս Վեհափառ կաթողիկոսին, որն Իր հայրապետական գահի բարձունքից չի զլանում Իր հայրական գորգուրանքը բաշխելու Իր շուրջ եղած միևնույն ամենակերքին մարդուն:

Ես անձնապես, ճեմարանական առաջին տարիներից սկսած, անարժան անձիս վրա միշտ զգացել եմ այդ գորգուրանքը: Ինչպես բաց դաշտում սփռված բույսերը արեգակի տաք շողերի տակ, մենք՝ ճեմարանականներս, Հայոց Հայրապետի ջերմացնող

հայացքի ներքո աճում էինք հոգևոր և մարմնապես: Իր հայրական սիրտը խնդակցում էր մեզ հաջողությունների պահերին և տղիքում ու վշտակցում էր մեզ մեր մտահոգության վայրկյաններին:

Վեհափառ Տե՛ր, ընդունեցե՛ք շնորհակալ սրտիս երախտագետ զգացմունքները, և թող Տերը շնորհի Ձեզ երկար և երջանիկ տարիներ, որպեսզի Ձեր կենդանացնող շունչը անպակաս լինի մեր վրայից, և կարողանաք գեթ մեկ մասնիկը այդ շնչի դնել Ձեզ շրջապատողների հոգիների մեջ:

Շնորհակալական խոսք ունեմ ուղղված նաև իմ հոգևոր ծնող լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսին, որը չգուցավ կատարելու ձեռնադրությանս և օծմանս արարողությունները, և հանձնիս նրա միաբանակից մյուս եղբայրներին, որոնք իրենց տիպար հոգևորականի կենցաղով քաջալերում և օրինակ են հանդիսանում հոգևոր ապարեզում իրենց առաջին խարխալուն քայլերը առնող մատաղ սերնդին:

Ի դեմս տեսչության՝ վերջինը ձեզ եմ հիշում, քայց ոչ ի հետինս, սիրելի ուսուցիչներ հոգևոր ճեմարանի: Դուք, որ անձնվիրաբար անում եք ձեր կարելիք՝ դաստիարակելու և մեր ժողովրդի ծառայությանը նվիրելու բարեկիրք հոգիներ:

Ձեր տարիներով ամբարած փորձն ու իմաստությունը լիաբուռն շաղ տվեցիք մեր մատաղ մտքի ու հոգու անդաստաններում: Այսօր իրավունք ունեք մեզ պահ տված այդ մնասները կրկնապատկված ետ պահանջելու՝ մեր ջանքերի շնորհիվ տարածելու համար դրանք մեր ժողովրդի սպասելիքների և ակնկալիքների անդաստաններում:

Սիրելի ժողովուրդ, դու և այն բոլոր մարդիկ, որ իրավասու եք ունենալու ինձանից ակնկալիքներ, քաջություն եմ գտնում մեզս խոստանալու, որ առավելագույն ջանքերս պիտի չխնայեմ կատարելու կամ տալու համար այն, ինչ որ սպասվում է ինձանից:

Խոստանում եմ հավատարիմ մնալ այն ուխտին, որ ահա կրկին ուխտում եմ ձեր բոլորի առաջ: Եվ թող այդ կնիքը խթան հանդիսանա և ընդոստ ոտքի հանի ինձ ընդարմացման պահերիս:

Աստուծո օրհնությանս և օգնականությանս հարատև աշխատանքի և անձնորաց նվիրումի տարիներ թող լինեն կյանքիս բոլոր օրերը՝ ընծայված Ամենակալի փառքին և Լուսավորչի գահին:

Դուք ևս, սիրելիներ, ձեր աղոթքի ձայնը միացրեք իմ ձայնին, որպեսզի Տերը օգնի և առաջնորդի ինձ այս ուխտիս մեջ, ամեն:



ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ԳԱՆՈՒՍՏ ԿՅՈՒՂԵՆԿՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ

Այս տարի լրացավ Մայր Աթոռի հարազատ զավակ և ազգային մեծ բարերար Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան 100-ամյակը:

Այս առթիվ սեպտեմբեր 1 թվակիր նվիրապետական Աթոռներին, թեմերին, ազգային-եկեղեցական մարմիններին և մամուլին ու համայն հայ հավատացյալ ժողովրդին գրած Իր սրբատառ կոնդակում Հայոց Հայրապետը հրահանգում էր, որ «մեր բոլոր եկեղեցիներում մեջ հոգեհանգստյան հանդիսավոր արարողություններ կատարվին, հառաջիկա դեկտեմբեր ամսվան ընթացքին, կենդանի խոսքով և հրատարակություններով պանծացնելու մեծ բարերարի հիշատակը»:

Հայրապետական կոնդակի հրահանգի համաձայն, Մայր տաճարում դեկտեմբերի 14-ին, կիրակի օրը, հանդիսավորությամբ նշվեց Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան 100-ամյակը:

Առախոտյան ժամը 11-ին Մայր տաճարում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գաապարյանը ս. պատարագ է մատուցում:

Աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել Մայր Աթոռի միաբանության և Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունը, պաշտոնական անձինք և ուխտավորներ: Տաճարը լիքն է աղոթավոր հավատացյալներով:

Ս. պատարագին ներկա է նաև Հայոց Հայրապետը:

«Հայր մեր»-ից առաջ դրոշմեջում են Մայր տաճարի զանգերը: Հնչում է «Էջ Միածինն է Հօրէ» շարականը տաճարի կամարների տակ: Ավագ սեղանի բեմից սրծ. տ. Հովհաննես քհն. Մարությանը ընթերցում է հայրապետական սրբատառ կոնդակը ի լուր ժողովրդյան (Հայրապետական կոնդակը տպված է «Էջմիածին» ամսագրի 1969 թ. Թ համարում, էջ 3):

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո քարոզում է պատարագիչ հայր սուրբ՝ «Տուք և տացի ձեզ, չափ բարոք, թաթաղուն, շարժուն, գեղուն տացեն ի գոգս ձեր» (Ղուկ. Զ 38) բնաբանով, շեշտելով Գալուստ Կյուլպենկյանի կյանքի և գործունեության ուսանելի կողմերը, որպես հայ ժողովրդի բազում շնորհներով օծված զավակներից մեկի, որպես Մայր Աթոռի հարազատ զավակի, հավատավոր մեծ հոգու տեր մարդու և բարերարի ու բարեգործի:

Քարոզից հետո Հայոց Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է Ավագ բեմի առաջ հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Գալուստ Կյուլպենկյանի:

Դեկտեմբերի 20-ին, առախոտյան ժամը 13-ին, հոգևոր ճեմարանում տեղի է ունենում հիշատակի ցերեկույթ՝ նվիրված Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան 100-ամյակին:

Հանդիսությամբ նախագահում է Վեհափառ Հայրապետը: Ներկա են Մայր Աթոռի միաբանները, հոգևոր ճեմարանի դասախո-

սակն կազմն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոններունն ու հյուրեր:

Հանդիսությունը բացվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և «Էջ Միածինն է Հօրե» շարականի երգեցողությամբ:

Ապա Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը Գալուստ Կյուլպենկյանի հիշատակին նվիրված ցերեկույթը բացելով ասում է, որ հավաքվել ենք ճեմարանի հարկի տակ՝ մի անգամ ևս մեր երախտագիտության և հարգանքի սրբ-տագին տուրքը բերելու Գալուստ Կյուլպենկյանի անձին, գործին և մեծ բարեգործությամբ, որովհետև նա միաժամանակ բարերարն է հոգևոր ճեմարանի:

Այնուհետև տ. Հայկազուն արքեպետը հրավիրում է «Էջմիածին» ամսագրի խմբագիր և ճեմարանի ալագ դասախոս Ա. Հատիսյանին, որպես օրվա գլխավոր բանախոսի, զեկուցելու Գալուստ Կյուլպենկյանի կյանքի և գործունեության մասին:

Հարգելի բանախոսը Հայոց Հայրապետի սեպտեմբեր 1 թվակիր կոնդակի մտքերի և արտահայտությունների հիման վրա Գալուստ Կյուլպենկյանին ներկայացնում է որպես մեր ազգի բազում շնորհներով օժտված զավակը, փայլուն իմացականություն, տաղանդավոր, գործարար անձնավորություն, շոայտրեն օժտված պայծառ միտք, բարոյական ամուր և կարագիր, աշխատանքի ստեղծարար կիրք ունեցող մեկը, մեր ժամանակաշրջանի մեծագույն դեմքերից մեկը տնտեսական-միջազգային բեմի վրա, իր կտակով բարոյական, անկորնչելի արժեք տվող իր հարստության, որպես հիմնադիրը Լիաբոնում բարեսիրական մի մեծ հիմնարկության, որն արդարորեն կրում է իր անունը, և, վերջապես, Մայր Աթոռի հարազատ զավակը, որի կտակին է պարտական Մայր տաճարը, մեր օրերի իր պայծառությունն ու վերաշինությունը:

Բանախոսը այնուհետև ճշում է հայ Կեսարիայի մեծ երախտիքը մեր ժողովրդի ազգային-եկեղեցական և մշակութային կյանքում, իշխանական նվիրատվություններով շեն ու պայծառ պահելու համար մեր վանքերն ու դպրոցները, ազգային հաստատությունները:

Գալուստ Կյուլպենկյանը, շեշտում է բանախոսը, կեսարացի հայ մարդու եկեղեցա-սիրությունը, ձեռներեցությունը, չարքաշությունը, մտքի ճկունությունն ու ճարպկությունն իր մեջ լավագույնս մարմնավորող անձնավորություններից մեկն է հանդիսանում, որի անունը, 1930 թվականից հետո մանավանդ, սերտորեն կապված է եղել սփյուռքում եկեղեցիների շինության, կրթա-

կան, մարդասիրական ձեռնարկների օգնության և պայծառության հետ:

Մեծ անձնավորությունները իրենց ժողովրդի շնորհների, առաքիությունների մարմնավորումներն են:

Նյութականը մեծ ուժ է, և ինչպես ամեն մի ուժ, եթե այն իմաստությամբ շահագործվի, բարության, շինարար բարեգործության է փոխակերպվում և հանդիսանում է աղբյուրը մեծագույն իրագործումների:

Հարստությունը միջոց է և ոչ թե նպատակ: Բոլոր նրանք, ովքեր ոսկու չափանիշով են դատում կյանքը ու մարդկային բոլոր հարաբերությունները, նրանք դժբախտներ են, որոնք մուլնիսկ չեն կարողանում վայելել իրենց դիզած բարիքները, ինչպես Ավետարանի անմիտ մեծատունը, և որոնք փողի մամոնայի առաջ ստրկացած հոգիներ են:

«Երանի է տալն քան զառնուլն» (Գործ Ի 35):

Ոսկու դեզերի մոտ՝ ոսկի սիրտ. հարստության կողքին՝ առողջ միտք և մարդասիրական վերաբերմունք, հանրային-հասարակական, ազգային-հայրենասիրական պարտքի գիտակցություն:

Այս է կարևորը: Ու այս մասին ծանոթ Ավետարանի տնտեսական-բարոյական «Ոչ կարեք ծառայել Աստուծոյ և Մամոնայի», բայց և «Արարեք ձեզ բարեկամս ի Մամոնայէ անիրաւութեան»: Հարստությունը թափանցիկ է բարի, հաւատարիմ և ազնվածապէս է, բայց շատ վատ բռնակալ և ախիղճ «տէր»:

«Մեծատանց որ են յայս աշխարհ պատուէր տաջիր մի՛ հպարտանալ և մի՛ լուսալ ի մեծութիւն սնոտի, այլ յԱստուած զբարիս գործել, մեծանալ գործովք Բարութեան» (Ա. Տիմոթ. Զ 17), այսպես է տվրեցնում մեծ առաքյալ Պողոսը:

Այս վերջիններից էր Գալուստ Կյուլպենկյանը: Նա իր իշխանավայել նվիրատվությամբ հանդիսացավ ոչ միայն ազգային մ բարերար, այլ նաև միջազգային մարդասրական-բարեսիրական մեծագույն հիմնադրներից մեկի հիմնադիրը և մարդկության բարերարը:

Գալուստ Կյուլպենկյանը միայն հարստություն չդիզեց: Նա հանդիսացավ նաև արվեստի գործերի համաշխարհային չափանիշով հասկացող, սիրող և գնահատանձնավորություն: Նա հավաքեց, գնեց և մաշխարհային արժեք ներկայացնող ռուսարվեստական գանձեր, հնություններ, ճապոնական, արվեստի հրաշալիքներ, քանդակներ, նկարներ, ապացույց՝ Լիաբոնում անունով վերջերս բացված մեծարժեք թագարանը:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աստուծո օգնականությամբ և Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով, Մայր Աթոռում ձեռնարկվեց և իր լրումին հասավ Նոր Կտակարանի (չորս Ավետարաններ և Գործք առաքելոց) արևելահայերեն նոր հրատարակությունը, 1969 թ. դեկտեմբերին, Մայր Աթոռի տպարանից, 15 տպագրական մամուլ ծավալով, 472 էջ, 10000 տպաքանակով:

Չորս Ավետարանները և Գործք-ը, 1895 թ. Կ. Պոլսում հայոց պատրիարքարանի հսկողությամբ հրատարակված Աստվածաշնչի գրաբար բնագրից արդի արևելահայերենի են վերածել հոգևոր ճանապարհի դասախոսներ Արթուր Հատիտյանը, Պարգև Ծափազյանը և Սամվել Անթոնյանը:

Սույն գործին իր օգտակար աշխատակցությունն է բերել նաև տ. Տիրան արքեպ. Ներսիսյանը՝ բնագրային ճշտումներ կատարելով Նոր Կտակարանի օտար լեզվով գիտական վերջին հրատարակությունների հիման վրա:

Մայր Աթոռում մեծ ուրախությամբ է այս բարի լուրը հաշտնում հայ եկեղեցու հոգևոր սպասավորներին և հավատացյալ ժողովրդին, որ ի Հայաստան և ի ափսոսա աշխարհի:

Մայր Աթոռում առաջին անգամն է, որ կատարվում է Նոր Կտակարանի արևելահայերեն հրատարակությունը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

27 հունվար 1970 թ.,

Ա. Էջմիածին





ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ԳԱՂՈՒՄՏ ԿՅՈՒՂՊԵՆԿՅԱՆ

Գալուստ Կյուլպենկյանին երբեք օտար չէին մեր ազգային-եկեղեցական դժվարություններն ու մտահոգությունները:

Որպես Մայր Աթոռի հարազատ զավակ նա սիրում էր Մայր Աթոռն ու Հշմիածինը և պաշտում որպես միակ համազգային կենտրոնը հայ եկեղեցու: Դրա պայծառ վկայությունն է նրա նամակագրությունը լուսահոգի Ս. Խորեն Ա և Ս. Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսների հետ, ու ապա Կյուլպենկյանի 400.000 դոլլարի նվիրատվությունը Մայր տաճարի բարեգարդության համար, որպես սրտագին, որդիական նվեր, իր ներքին ձայնի թելադրանքով և ոչ երբեք՝ արտաքին միջնորդությամբ կամ բարեխոսությամբ:

Որպես եկեղեցի և ժողովուրդ, վերջում ասաց Ա. Հատիտյանը, ազգովին երախտապարտ ենք այս մեծ սրտի տեր նույնքան մեծ հային:

Մեր ժողովրդի մեծությունը նրա բարոյականի և հոգեկան առաքինության մեջ է: Իսկ մեր ազգի զավակների ճշմարիտ մեծությունը և վեհությունը դրսևորվում են նրանց գոհաբերության ոգու մեջ, եկեղեցու, ժողովրդի, ազգի և հայրենիքի հանդեպ ցուցաբերած ամբողջական նվիրման ու սիրո մեջ:


Ճշմարիտ մեծությունը ոգեկան առաքինություն է:


«Երանի որ ունիցի յիշատակ ի ս. Հշմիածին»:

Գալուստ Կյուլպենկյանի հիշատակին նվիրված գեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունն էին բերել հոգևոր ճեմարանի ուսանողները՝ խմբերգերով, արտասանություններով և նվագով:

Հանդիսության փակումը կատարում է Հայոց Հայրապետը իր օրհնության խոսքով: Նորին Սրբությունը մի քանի հիշողություններ և դրվագներ պատմելով Գալուստ Կյուլպենկյանի ուսանելի ու թելադրական կյանքից, նրան ներկայացնում է որպես անսահման եռանդի ու անխուճ աշխատանքի մարդու, որպես գիտնականի, արվեստագետի, մեծ բարերարի և ճշմարիտ հայ մարդու, որի անունը և հիշատակը միշտ կենդանի կմնա նաև Մայր Աթոռի մեջ որպես դարավոր ու համազգային այս նվիրական հաստատության բարերարներից և հարազատ զավակներից մեկի:

Հոգևոր ճեմարանում Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսությունն ավարտվում է խմբովին երգված Տերունական աղոթքով և հայրապետական «Պահպանիչ»-ով:





**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄ
ԼԻՍԱԲՈՆՈՒՄ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԴՈԿՏ. ԺՈԶԵ Դ. Ա. ՊԵՐՏԻԿԱՆԻՆ**

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մասնավոր հանձնարարությամբ Արևմտյան Եվրոպայի հայոց հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց ստաճնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը 1969 թվականի դեկտեմբերի 9-ին մեկնում է Լիսաբոն՝ պաշտոնապես հանձնելու Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դուկտ. Ժոզե Դ. Ա. Պերտիկանին, Հայոց Հայրապետի սեպտեմբեր 1 թվակիր սրբատառ կոնդակը, ազգային մեծ բարերար և Մայր Աթոռի հարազատ զավակ Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան հարյուրամյակի առթիվ:

Լիսաբոնում, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նորաշեն շենքի մեջ, դեկտեմբերի 9-ին տեղի է ունենում հոբելյանական հանդիսություն՝ նվիրված Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան 100-ամյակին՝ նախագահությամբ դուկտ. Ժ. Պերտիկանի և ի ներկայությամբ հայկական բաժնի պաշտոնեական, հիմնարկության բոլոր անդամների, պաշտոնական բարձրատիճան հյուրերի:

Հանդիսության ընթացքում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը ընթերցում է հայրապետական սրբատառ կոնդակը, որը Մայր Աթոռում պատրաստված էր գեղարվեստական ձևավորումով հայկական մանրանկարչության գեղեցիկ և ինքնատիպ ոճով:

Հայրապետական կոնդակի պորտուգալերեն թարգմանությունը նախապես բաժանվել էր հանդիսության բոլոր ներկաներին:

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկական բաժնի վարիչ պրն. Ռոբերտ Կյուլպենկյանը, հանուն կենտրոնական վարչության, արտագին շնորհակալություն ու որդիական երախտագիտություն է հայտնում Ամենայն Հայոց Հայրապետին՝ «մեծ բարերարի անձին և խնամակալության մարմնույն համար եղած այս բացառիկ գնահատանքին և բարձր ուշադրության համար»,—գրում է տ. Սերովբե արքեպիսկոպոսը իր դեկտեմբեր 10 թվակիր նամակում: Այնուհետև բոլոր ներկաների արտագին ծափերի մեջ տ. Սերովբե արքեպիսկոպոսը


հայրապետական կոնդակը հանձնում է կենտրոնական վարչության նախագահ դուկո. Ժ. Պերտիկանին, որը շնորհակալությամբ ընդունելով այն, խնդրում է սրբազանին «իր հարգանքն ու երախտագիտությունը հայտնել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, թե՛ կոնդակի բովանդակալից իմաստին և թե՛ անոր գեղարվեստականորեն ներկայանալի ձևին համար, ավելցնելով որ կոնդակը շրջանակի մը մեջ առնված պիտի պահվի Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության մեջ իբրև գեղեցիկ հիշատակ մը Հայոց Հայրապետեն և Մայր Աթոռ ս. Էջմիածնեն»:


Նույն օրը, ավելի ուշ, Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան հոբելյանի առիթով, տեղի է ունեցել հայ երաժշտության և, մանավանդ, անմահ Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկույթ, որին իր շնորհալի մասնակցությունն է բերել՝ այս առիթով հատկապես Համբուրգից հրավիրված հայտնի երգչուհի Լուիզա Պոգապալյանը:

Հանդիսության երաժշտական ծրագիրը բաղկացած է եղել երկու մասերից: Առաջին մասը՝ ամբողջությամբ կոմիտասյան երգերից, երկրորդը՝ հայաստանյան և արուստահմանյան երգերից: «Երգչուհին իր բացառիկ և հմայիչ ձայնով, ինչպես նաև Կոմիտասն և հայ երաժշտական արվեստը, մեծ տպավորություն ձգեցին բոլոր ներկաներում վրա, որոնք անվերապահորեն բարձր գնահատեցին Կոմիտաս վարդապետի երաժշտական տաղանդը և հայ երաժշտության ինքնատիպ արվեստը»,—գրում է տ. Սերովբե արքեպիսկոպոսը:

Լիսաբոնում ապրող փոքրաթիվ հայ համայնքի համար դեկտեմբերի 9-ը ազգային հպարտության անմոռանալի մի օր հանդիսացավ:

Տեղական մամուլը նույնպես մեծ գովեստով է խոսել Գալուստ Կյուլպենկյանի բացառիկ բարեգործության, ինչպես նաև հայ երաժշտական մշակույթի մեծության և երգչուհի Լուիզա Պոգապալյանի կատարողական բարձր արվեստի մասին:





ԱՄԱՆՈՐԸ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

1969 թվականի վերջին օրն է, չորեքշաբթի, դեկտեմբերի 31-ը:

Երեկոյան ժամը 7.30-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի և Վերատուգիչ հանձնաժողովի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, մայրավանքի պաշտոններությունը հոգևոր ճեմարանի հանդիսարանում, Ամանորի ավանդական սեղանների շուրջ բոլորած, հրաժեշտ են տալիս անցնող՝ 1969 թվականին և նոր հույսերով և հույզերով, նոր եռանդով և խղճով, բարի ցանկություններով դիմավորում են նոր տարին՝ 1970 թվականը:

Վեհափառ Հայրապետը օրհնում է բարիքներով ծանրաբեռնված սեղանները, որոնց շուրջ ստեղծվում է Ամանորի ջերմ, հայրենասիրական մթնոլորտ:

Հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ծնորհք վրդ. Գաապարյանը արտագին խոսք է ասում՝ ողողված Վեհափառ Հայրապետին, շնորհավորելով Նորին Սուրբ Օծության, Մայր Աթոռի միաբանության և հոգևոր ճեմարանի դասախոսների և ուսանողության Նոր տարին:

Այնուհետև գործադրության է դրվում գեղարվեստական մի համեստ հայտագիր՝ նվիրված օրվա խորհրդին և նշանակությանը:

Մեջընդմեջ հանդես է գալիս հոգևոր ճեմարանի երգչախումբը՝ դեկավարությամբ ճեմարանի եվրոպական երաժշտության դասախոս Խորեն Մելիսանեջյանի:

Բ լսարանի ուսանող Խաչիկ Խաչատրյանը արտասանում է իր հեղինակած «Կոմիտաս» բանաստեղծությունը:

Գ լսարանի ուսանող Ղազարոս սրկ. Կյուրեղյանը, հանուն ուսանողության, շնորհավորում է Վեհափառ Հայրապետի, դասախոսների և ներկաների Նոր տարին և երախտագիտության, որդիական ու նվիրումի ջերմ խոսքեր է ասում:

Հանուն Մայր Աթոռի միաբանության խոսք է ատնում ս. Գեղարդի վանքի վանահայր հոգ. տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը, որն իր յուրահատուկ խորհրդածությամբ բնորոշում է ամանորյան խորհուրդը և նրա դերը մարդկային հասարակության կյանքում:

Մի խումբ ուսանողներ, Վարդան սարկավագի գլխավորությամբ, երգում են անգլերեն լեզվով սուրբ Ծննդյան տաղեր:

Բարեջերմի Հակոբ և Վարդան սարկավագները միասին դաշնամուրի վրա կատարում են Բրամսի հունգարական պարերից:

Ապա սկսվում է կաղանդի ուրախ վիճակահանությունը: Գ դասարանի ուսանող Սամվել Արսենյանը հանդես է գալիս «Հորիզոն» ծիծաղաշարժ ասույթների արտասանությամբ:

Ամանորի ստիթով խանդավառ ելույթներ են ունենում և բարեմաղթություններ կատարում Մայր Աթոռի պայծառության, Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության, հայրենյաց բարօրության և աշխարհի խաղաղության համար ներկաներից շատերը:

Ելույթներ են ունենում Վեհափառ Հայրապետը, Վահան եպիսկոպոսը, տեսուչ տ. Ծնորհք վարդապետը, պրոֆ. Ա. Առաքյանը, Ա. Հատիտյանը, Գր. Գյուլյանը և Ս. Անթոնյանը:

Ամանորյան երեկոյթը վերջանում է «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:



Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 25-ին, հինգշաբթի, տոն «Արքայն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին»:

Ս. Ստեփաննոսի տոնը միաժամանակ տոնն է Մայր Աթոռի բոլոր սարկավագների: Ինչպես միշտ, այս տարի ևս ավանդական հանդիսությամբ է նշվում սարկավագների տոնը Մայր Աթոռում, տոն, որը ուրախություն է պատճառում հոգևոր ճեմարանի ուսանողությանը և մայրավանքի միաբանությանը:

Մեծ տոնի առթիվ սարկավագները իրենք են ղեկավարում օրվա եկեղեցական երգեցողությունները և կատարում օրվա հատուկ հոգեգմայլ շարականների մեներգները:

Դեկտեմբերի 24-ին, չորեքշաբթի երեկոյան, Մայր տաճարում կատարվում է նախատոնակը:

Ապա երեկոյան ժամերգությունից և նախատոնակից հետո, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և հոգևոր ճեմարանի տեսչության միջնորդությամբ, կիսաառկավագության աստիճան է շնորհվում Գլխարանի ուսանող ուրարակիր Կարպիս Գալստյանին՝ Մայր տաճարի փոխ-լուսարարակետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանի ձեռամբ:

Դեկտեմբերի 25-ին, հինգշաբթի առավոտյան, Մայր տաճարում հանդիսավորությամբ պաշտվում է ժամերգություն՝ մասնակցությամբ միաբանության և ուսանողության: Առանձին հուզումով հնչում է «Այսօր

դաք»-ը, որ սարկավագների խումբը երգում է միաձայն:

«Փառք ի բարձունս»-ի ժամանակ սարկավագները, սաղավարտ ի գլուխ, բուրվատ ի ձեռին, շարվում են ս. Ստեփաննոսի բնակատեղի և միաբերան երգում՝ հրեշտակների օրհներգությունը, մանկունքը և «Ստեփաննոս քաղցրիկ տատրակ» տաղը:

Հանդիսավոր տոնի առթիվ Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում է ճեմարանի ուսանողական երգչախումբը՝ ղեկավարությամբ Արարատ արկ. Գալստյանի:

Հանդիսավոր ս. պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն», այնուհետև կատարվում է սարկավագական ձեռնադրությունը: Ձեռնադրության կարգը կատարում է տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը: Խարտալիլակի պաշտոնը կատարում է տ. Հակոբ քին. Հակոբյանը: Ձեռնադրիչ սրբազանը նորընծային շնորհում է սարկավագական իշխանություն՝ ասելով. «Առ զմաքուր և սուրբ ուրարս ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... Կեանք քո և վաքք քո լիցին օրինակ ժողովրդեանս»:

Օրվա տոնի նշանակության և ձեռնադրության հուզիչ ու սրտագին խորհրդով համակվել ու գրավվել էին բոլորը:

Զեռնադրության սրբազան արարողության ավարտին պատարագիչ հայր սուրբը խոսում է բովանդակալից ու խրատական մի քարոզ, շնորհավորում է նորընծա սարկավագին և Մայր Աթոռի սարկավագներին, պատվիրում է զինվել և Ստեփանոսի արիությամբ ու հավատքով:

Հավարտ և պատարագի բոլոր սարկավագները, առաջնորդությամբ փոխ-լուսարարապետի և ճեմարանի տեսչի, գնում են Վեհարան՝ իրենց Հոգևոր Հոր՝ Հայոց Հայրապետի օրհնությունը ստանալու:

Հայոց Հայրապետը ջերմ սիրով ընդունում է Իր հոգևոր զավակներին և հոգեւից մի խրատականով մի անգամ ևս նրանց զինում իրենց ապագա ծառայության մեջ, որպեսզի լինեն «մշակք առանց ամօթոյ»:

Նույն օրը, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանի ուսանողական սեղանատանը տեղի է ունենում ճաշկերույթ՝ ի պատիվ սարկավագների: Ծաշկերույթին մասնակցում էին Մայր

Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը:

Նորընծա սարկավագին շնորհավորում են տ. Հուսիկ եպիսկոպոսը և տեսուչ հայր սուրբը:

Սարկավագներին ուղղված շնորհավորական ջերմ խոսքեր են ասում հոգևոր ճեմարանի դասախոսներ Ա. Հատիսյանը, Գր. Գյուլյանը և Պ. Ծահբազյանը:

Վերջում նորընծա Կարպիս սարկավագը շնորհակալության և երախտագիտության խոսք է ասում՝ ուղղված Վեհափառ Հայրապետին, հոգևոր ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին ու վանքի միաբանությանը, հանուն ողջ սարկավագների խմբի:

Բարեշնորհ Կարպիս սրկ. Գալստյանը ծնվել է Էջմիածին քաղաքում 1947 թվականին: Վերջացնելով լոթնամյա դասընթացը տեղի միջնակարգ դպրոցում, 1962 թվականի սեպտեմբերին ընդունվել է հոգևոր ճեմարան:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Հունվարի 1-ին, հինգշաբթի.—Կաղանդ և տարեմուտ.

Մայր տաճարում Ամանորի առթիվ մատուցվեց ս. պատարագ։ Պատարագից տ. Շնորհք վրդ. Գասպարյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց Հայրապետական մաղթանք։

Նոր տարվա խորհրդի և նշանակության մասին քարոզեց Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը։

Ս. պատարագից հետո ողջ միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը տ. Հուսիկ եպիսկոպոսի առաջնորդությամբ ուղղվեցին Վեհարան՝ շնորհավորելու Վեհափառ Հայրապետի Նոր տարին և ստանալու նրա օրհնությունը։

Կեսօրից հետո հոգևոր ճեմարանի ուսանողները, Ամանորի և ս. Մենդյան տոների կապակցությամբ, արձակուրդով մեկնեցին իրենց հարազատների մոտ։

Հունվարի 2-ին, ուրբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ս. Էջմիածին և մայր հայրենիք ժամանեց Արզենտինայի հայկական ս. Գրիգոր Լուսավորիչ երկրորդական վարժարանի տեսուչ տ. Հարություն ծ. վրդ. Մուշյանը՝ վարժարանի այս տարվա շրջանավարտ երեք ուսանողուհիների և երկու ուսանողների հետ։ Մայր տաճարում իրենց աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, տ. Հարություն վարդապետի առաջնորդությամբ ուսանողները ներկայացան Վեհափառ Հայրապետին նրա օրհնությունն առնելու համար։

Հունվարի 4-ին, կիրակի.—Ձ օր Մենդեան պահոց.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Նարեկ վրդ. Շաքարյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հունվարի 5-ին, երկուշաբթի.—Ծրագալսյց Մենդեան և Աստուածայայտնութեան Տեառն մեռյ Յիսուսի Քրիստոսի.

Երեկոյան ժամը 5-ին Մայր տաճարում ծրագալույցի ս. պատարագ մատուցեց տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ ս. պատարագի կատարվեց եսախատոնակ, որից հետո Վեհափառ Հայրապետը հանդիսավոր թափորով և «եռօրհուրդ մեծ» շարականի երգեցողությամբ առաջնորդվեց Վեհարան։

Հունվարի 7-ին, չորեքշաբթի.—Բ օր Մենդեան. Յիշատակ մեռելոց.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Շնորհք վրդ. Գասպարյանը։ Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգևհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց»։

Հունվարի 8-ին, հինգշաբթի.—Այսօր, Ամանորի և ս. Մենդյան արձակուրդներից հետո, հոգևոր ճեմարանում վերսկսվեցին դու-

սավանդությունները: Վերաքննության օրեր են: Ուսանողները պատրաստվում են կիսամյա քննություններին:

*
* *

Հունվարի 11-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 12-ին, երկուշաբթի.—Այսօր հոգեվոր ճեմարանում սկսվեցին 1969—70 ուսումնական տարվա բանավոր և գրավոր կիսամյա քննությունները, որոնք կտեսն մինչև հունվարի 26-ը:

*
* *

Հունվարի 13-ին, երեքշաբթի.—Տօն ունեւանկոյութեան Տեառն մեռոյ Յիսուսի Քրիստոսի:

Օրվա տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

*
* *

Հունվարի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր Լեւոնյան ժամը 18-ին նրկանում, հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Հունվարի 15-ին, հինգշաբթի.—Տօն ծնունդեան Յովնանու Կարապետի:

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Հովհաննես քհն. Մարությանը:

Նույն օրը, հին տոմարով ներքին թեմերում ծննդյան տոների կապակցությամբ, հանդիսություններին մասնակցելու համար, Մայր Աթոռից մեկնեցին տ. Նշան քհն. Բեյլերյանը՝ ընկերակցությամբ Ղազարոս սրկ. Կյուրեղյանի, Կիրովաբադ. Հովհաննես սրկ. Գրվրգյանը՝ Թբիլիսի. Հովսեփ սրկ. Հակոբյանը՝ Արմավիր (Հյուսիսային Կովկաս). Եղիշև սրկ. Բաղդասարյանը՝ Մոսկվա. Արարատ սրկ. Գալստյանը՝ Օրշոնիկիձե:

*
* *

Հունվարի 18-ին, կիրակի.—Բարեկենդան առաջադրաց պահոց.

Մայր տաճարում պատարագեց տ. Դևորգ վրդ. Սերայդարյանը և քարոզեց՝ «Օրհնել է արդարադատն Աստուած, որ արար իրաւունս արդարոյն Յովհաննուս բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 19-ին, երկուշաբթի.—Այսօր Լեւոնյան ժամը 18-ին Մայր տաճար այցելեցին Կանադայի պառլամենտի սենատի նախագահ (սպիկեր) Ժան Պոլ Դեշատլեն, որը Սովետական Միություն է ժամանել պաշտոնական այցով: Պրն. նախագահին ընկերակցում էին սենատորներ Զեկ Ֆլինը, Զոն Կոնոլին և Զոն Էյդերը:

Հարգելի հյուրերը Մայր տաճարում ընդունվեցին, հանուն Հայոց Հայրապետի, փոխ-լուսարարապետ տ. Հուսիկ Խալիկոպետի կողմից, որը բացատրություններ տվեց տաճարի պատմության և ճարտարապետության կառույցի մասին: Հյուրերը եղան նաև Մայր տաճարին առնթեր եկեղեցական աշակերտի թանգարանում:

Այնուհետև, հարգելի հյուրերին Վեհափառում ընդունեց Հայոց Հայրապետը:

Ջերմ ու սրտագին զրույցից հետո, հարգելի հյուրերը հրաժեշտ առին լավագույն տպավորություններով Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից:

*
* *

Հունվարի 24-ին, շաբաթ.—Այսօր երեկոյան ժամը 18-ին հոգևոր ճեմարանի հարկի տակ տեղի ունեցավ հանդիպմուն երեկո՝ բանաստեղծ Գևորգ Էմինի հետ: Հարգելի բանաստեղծի կյանքի և գրական ստեղծագործության մասին զեկուցումով հանդես եկավ հոգևոր ճեմարանի հայոց լեզվի և դրականության դասատու Արամայիս Սահակյանը:


Ուսանողները հատվածներ արտասանեցին Գևորգ Էմինի բանաստեղծություններից:

Հանդիպման երեկույթի ավարտին Լույսն ունեցավ նաև բանաստեղծ Գևորգ Էմինը:

Հանդիպմանը ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 25-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Շնորհք վրդ. Գասպարյանը և քարոզեց՝ «Նկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես յանգուցից զձեզ» բնարանով:



ԱՎԱՐՏԱԾԱՌԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 27-ին, շաբաթ օրը, ժամը 13-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանը դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ 1968—1969 ուսումնական տարեշրջանի հոգևոր ճեմարանի շրջանավարտներ Հովհաննես արկ. Գրվրգյանի, Արարատ արկ. Գալստյանի և Հակոբ արկ. Նալբանդյանի ավարտագրերի բանավոր պաշտպանությունը և վկայականների հանձնումը:

Բնիշ հանձնաժողովը, որի կազմում էին ճեմարանի դասախոսներ Ա. Հատիսյանը, Պ. Ծախրազյանը, Գր. Գյուլյանը, Ս. Անթոսյանը և Խ. Մելիսյանը, արդեն քննել էր ներկայացրած ավարտագրերը և գրավոր միջնորդություն հարուցել ճեմարանի տեսչությանը՝ նրանց բանավոր պաշտպանության թույլտվության համար:

Դիպլոմային աշխատանքների արժանիքների և թերությունների մասին զեկուցում է դասախոս Ա. Հատիսյանը: Այնուհետև խոսք է տրվում շրջանավարտ սարկավագներին, որոնցից յուրաքանչյուրը համառոտակի ներկայացնում է իր կատարած աշխատանքը և պատասխանում հանձնաժողովի անդամների և ներկաների հարցերին:

Բարեշնորհ Հովհաննես արկ. Գրվրգյանի ավարտագրի նյութն է «Սաղմոսաց գիրքը, նրա հեղինակը, լեզուն և գրության ժամանակը», որը բաղկացած է առաջաբանից և վեց գլուխներից, 60 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտագրի բանավոր պաշտպանությունը գնահատվեց «գերազանց»:

Արարատ արկ. Գալստյանի ավարտագրի նյութն է «Գևորգ Դ կաթողիկոսը և հայ եկեղեցական երաժշտությունը», որը բաղկացած է առաջաբանից և երեք գլուխներից, 45 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտագրը գնահատվեց «լավ»:

Հակոբ արկ. Նալբանդյանի ավարտագրի նյութն է «Միշին հայերենի բառագանձը», որը բաղկացած է առաջաբանից և հինգ գլուխներից, 60 մեքենագրված էջ ծավալով:


Ավարտագրը գնահատվեց «գերազանց»:

Այնուհետև հոգևոր ճեմարանի տեսուչ ս. Շնորհք վրդ. Գասպարյանը ամփոփում է ավարտագրերի գրավոր և բանավոր պաշտպանության արդյունքները և խնդրում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ օրհնությամբ հանձնել դիպլոմները:

Բարեշնորհ շրջանավարտ սարկավագները համբուրում են Վեհափառ Հայրապետի աջը և, ծափահարությունների ներքո, սուսնում իրենց դիպլոմները:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը նաև իր օրհնության և թելադրության խոսքն է ուղղում շրջանավարտներին և, շնորհավորելով նրանց, այս ուրախ առիթով մեկական Աստվածաշունչ և մեկական գրիչ է նվիրում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը նույնպես շնորհավորում է նորավարտ բարեշնորհ սարկավագներին, մաղթում է, որ պետքի նրանք դառնան հայ եկեղեցու աւժանավոր, բարի մշակներ և իրենց ժողովրդին նվիրված անձնուրաց հովիվներ, հավատքի և գրչի մարդիկ:



ԳԵՎՈՐԳ ՀԱՏԻՏՅԱՆ

ՕՏԱՐԱԿԱՆԸ

(Հեղինակ՝ Եղիվարդ, Երուսաղեմ, 1966, էջ 218)

Եղիվարդի՝ Երուսաղեմի հայոց պատ-
րիարք Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի
բեղմնավոր գրչին վերջին ուշագրավ ստեղ-
ծագործությունն է «Օտարականը» խորա-
գրով գիրքը, որում էջերը մեզի կբերեն Ա-
վետարանի սրբազան դրվագներն քաղված
ներշնչումներ: Եղիվարդ նոր անուն մը չէ՝
սփյուռքահայ գրականության մեջ: Ավելի
քան երեսուն տարիներ է ի վեր ան կգրե ու
կստեղծագործե իբրև բանաստեղծ, գրագետ,
քարոզիչ և մտքի մշակ՝ գաղութահայ գրա-
կանության անդաստանին մեջ իր արժանի
և ուրույն տեղը գրաված: Իր բանաստեղծու-
թյուններում անդրանիկ ժողովածուն՝ «Մագ-
դաղիկեն մեղրամոմե», մոտ քառորդ դար մը
առաջ եկած էր ջերմ ու համակրական ըն-
դունելության մը արժանանալու բանաստեղ-
ծական իր լուրջ և ապահով տուրքերուն
շնորհիվ: Անոր հաջորդած էին՝ «Խորտակ-
ման գիշերներ», «Անցորդը» և ուրիշ քերթո-
ղական դիվաններ, որոնք նույնպես խանդա-
վառ տրամադրություններով էին ընդունվել
բանաստեղծական արվեստի իրենց միևնույն
արժանիքներուն համար: Արդարև, Եղի-
վարդ ստորագրությունը գրական զանազան
թերթերու, հանդեսներու և ամսագիրներու
էջերեն ներս միշտ ներկա՝ անուն մըն էր
նորանոր բանաստեղծություններու տակ, ու
դասական ոտանավորի տաղաչափյալ ա-
վանդություններուն կհակադրվել իր պատ-
մողական երկարաշունչ բանաստեղծություն-
ներուն ազատ և արձակ տողերու ինքնա-
տիպ կատուցումներով, որոնք կրոնագգայ
նոր ու թարմ շունչով մը տոգորում՝ կուգային
իբրև խոսուն վկայություն մը Եղիվարդի վա-
վերական տաղանդին և միանգամայն իբրև

ապահով երաշխիք՝ անոր ստեղծագործելու
անապատ եռանդին: Այդ օրերուն, խոհի ու
մտածման հոգեպատում ուրիշ գիրք մը, այս
անգամ արձակի կալվածեն, «Լեռան վրայեն,
երանիներ...» երևան կուգար իբրև նոր
հայտնություն մը այդ տաղանդին մեկ ուրիշ
երեսեն: Այդ գիրքը իր արտաքին ձևին մեջ
քարոզագիրք մը թեպետև (եթե հարկ է ճշ-
դել սեռին տեսակը), բայց իր բուն մտահո-
գություններով կզվեր-կանցներ սեռին մաս-
նավոր և ընկալյալ սահմանները՝ ավելի հե-
ռուն երթալու համար...: Սրբազան հեղինա-
կը երևան կհաներ աշխույժ ու կայտառ ար-
ձակ մը, ուր պատկերավոր մտածողության
մը հարուստ համեմատություններով, մաքուր
ու ջիկն լեզվի թափանցիկ պարզությամբ և
նկուն ու դյուրասահ ոճի մը դաշնավոր տո-
ղերու և դարձվածքներու ընդմեջեն կվերլուծ-
վեին Քրիստոսի լեռան քարոզները իբրև
վեհագույն պատգամներ՝ իրենց անդրագույն
իմաստներուն ծալքերը բանալու հեղինակի
ներանձնյա ապրումներուն և վերացման
պահներուն խորհրդածությանց տակ:

Նկատելի է, որ Եղիվարդի ներշնչումնե-
րուն մայր աղբյուրը, մեծ մասամբ, Ավետա-
րանն է: Իսկ իր ձգտումները կկեդրոնանան
ստավելապես կենդանի կյանքին ու մարդուն
վրան: Բայց Ավետարանեն քաղած իր պա-
տումները, որոնք կմշակվին ու կվերաստեղծ-
վին իբրև բանաստեղծություն, արձակ գրու-
թյուն, պոեմա և կամ քարոզ՝ իրենց ընդհա-
նոր ուրվագիծերուն մեջ սոսկական դրվա-
գումներ չեն, որ կպատմվին մեզի: Այլ ա-
նոնք որպես առիթ կօգտագործվին հեղինա-
կի խոհերը և ներաշխարհի ապրումները

պրիսմակելու, իր տեսիլքը սևեռելու մարդոց և աշխարհի կյանքին վրան:

Այս իմաստով, Ավետարանը կենդանի ներշնչարան մըն է, որմէ թոյլք կառնէ հեղինակի հոգին դեպի ոգեշնչեալ աշխարհի բարձրագոյն հորիզոնները վերթնելու և ուրում կվերադառնա իբրև հարուստ շտեմարան մը կյանքի խորհորդները լուսավորելու: Հեղինակը, գերազանցապէս կրօնագագաց հոգի մը, իր սերը, իր հիացումը և իր հոգիին ամբողջ ապրումներուն հանդիսարանը կեդրոնացուցած է Ավետարանի վրա, ի մասնավորի Հիսուսի կյանքին ու գործունեությանը: Այս տեսակետէն Եղիվարդի ներկա գիրքը՝ «Օտարականը» շարունակությունն է իր գրականության այս հիմնական գիծին, բայց նոր որակով մը, նոր ու բարձր մակարդակի մը վրա:

«Օտարականը» սիրտ և հավատքի բարձրագոյն արտահայտության գեղարվեստական եզակի ու մեծարժեք գործ մըն է: Անկա կը պալէ իր տեսական ծանոթ գիրքերէն տարբեր, ամբողջովին նոր ու անկոխ ճամբէ մը: Հիրավի, անցյալի մեր եկեղեցական մտավորականներու լուսավոր փառանգին մեջ գրագետ հոգևորականներէն ոմանց աստվածաշնչական գործերը, գրական տաղանդի առավել կամ նվազ շնորհներով՝ ուսուցումի կամ պատմումի, թափանցումի կամ մեկնաբանության սահմանները չեն անցած՝ մնալով հոգևոր դաստիարակության կարիքները հոգացող կրօնական գրքերու մակարդակին վրան: Իսկ օտարներէն՝ Ռոնանի հոշակավոր գիրքը՝ «Հիսուսի կյանքը», հակառակ հեղինակի հզոր տաղանդին, հավատքի տխուր կորուստի մը մեջ պատմաբանասիրական նյութի մը վերածված է: Իտալացի Պապինին իր «Քրիստոսի կյանքը» գրքով (սիրտ և հավատքի մեծ գործ մը սակայն) դատապաշտպանի դեր մը կշահասիրէ և հակառակ իր վերլուծական սխրագին շեշտումն, մտքի և տրամաբանության բռնավոր ճիգերով ինքզինքը կսպառէ...: Եղիվարդի սույն գիրքը սակայն, առանց բաղդատական զուգակշռի՝ առավելության նկարագիր մը շեշտելու ավելորդ մտահոգության, կրնանք ըսել, որ իր մտահոգման և իրագործման ինքնատիպ եղանակներով՝ կտարբերի բոլորէն: «Օտարականը» հեղինակին իսկ սիրած մեկ բացատրությամբ՝ ատոնցմէ ըլլալով, ատոնց չի պատկանիր: Վասնզի անիկա ո՛չ բացատրական, ո՛չ մեկնաբանական, ո՛չ պատմողական, ո՛չ աստվածաբանական, ո՛չ բնագանցական և ո՛չ ալ քարոզչական գիրք մըն է Հիսուսի մասին և Հիսուսի առիթով: Այլ անիկա կենդանի ոգիով, կենդանի խորքի մը տարածքին վրա փոված՝ Հիսուսի հրաշապատում կյանքն է:

Կյանք մը, որ բոլոր պայմանադրական կերպերէն ու եղանակներէն դուրս և անկախ՝ իրեն միակ նյութ և հերոս, միակ հանգույց և լուծում Հիսուսը ունի, Հիսուսը՝ իր ունեցած առաքելությամբ այս աշխարհի վրա:

«Օտարականը» Հիսուսի վարքապատում, բանաստեղծաշունչ «վիպերությունն» է: Ան գրված է հեղինակի խորունկ հավատքէն և մեծագոյն սերէն թևավորված հոգիի մը վսեմագոյն ներշնչումով: Ասիկա ինքնըստինքյան կնշանակէ՝ մտնել արվեստի սահմաններուն մեջ և արվեստի իրավունքները ընդգրկել: Վասնզի ամեն մեկ արվեստի գործ անհրաժեշտաբար կենթադրէ մեծ հավատք և մեծ սեր: Եվ ի՞նչ կնշանակէ այստեղ բանաստեղծական ըսվածը վերջապէս, եթէ ոչ՝ իր տեսիլքէն հափշտակված հոգիի գմայլահար վերացում: Եվ միթէ ամեն մեծ գործ մեծ տեսիլքի մը գինը չէ՞: Արդարև, պատրիարք հեղինակին՝ Հիսուսի վրա կեդրոնաձգված տեսիլքէն արձակվող փայլատակումներով լուսավառած են գիրքին էջերը, ուր կթևաբախէ անոր գմայլահար հոգին՝ անճնատուր պաշտամունքի վերացման մեջ: Այդ լույսերը հայելիէն անդրադարձող ցոլքերու պէս կպայծառացնեն կյանքի, ինչպէս հոգիի միգամած աղջամուղջները: Եվ վերջապէս, այս գիրքին մեջ Եղիվարդ մեզի կը ներկայանա իր խանդավառ երագէն հալածական հոգի մը, որուն անըջահած մտապատկերները միշտ լուսավորվեր են այն միտս երագողի տեսիլքէն, որ աշխարհ եկալ իբրև մարդկության փրկության, արքայության գերիշխանության և իր մահվամբ չարը հաղթահարելու աննվաճ երագէն հափշտակված մարգարէ:

Հիշատակելի է, որ սրբազան պատրիարքը բարի բաղձանքն է ունեցեր իր այս գիրքը ձոնելու Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին Անոր գահակալության տասնամյակին առթիվ:

Գիրքի վերնագրէն իսկ ընթերցողը կհրավիրվի ինքզինք գերազանցապէս ինքնատիպ ստեղծագործության մը առջև զգալու: «Օտարականը»: Անշուշտ, չենք կասկածի, որ կենսագրական, փաստագրական կամ բացատրական ընթերցումի մը տաղտկալի փորձության պիտի մատնվինք: Մեզի կներկայանա սովորականէն, ընթացիկէն և տափակէն վեր թելադրական և պերճախոս խորագիր մը: Որքան ճիշտ և ինքնատիպ, նույնքան և փոխաբերականորէն համապատասխան Հիսուսի անձին և անձնավորության:

Օտարականը...: Ստուգիվ, Հիսուս օտարական մըն էր, երկինքէն երկիր իջած պանդուխտ մը, որուն երկրային կյանքը ժամանակավոր տարագրություն մը եղավ: Բայց

Ան եկած էր, որպեսզի կարենար այս աշխարհի խաբուսիկ և անցավոր բաղձանքները երկնային կյանքի կարոտին սկսել և երկինքը իբրև վերջնական հայրենիք մը մատուցել մեզի՝ մեր աշխարհային այս վաղանցուկ բնակչությունը տխուր պանդխտություն մը համարելով: «Ով որ հավերժության կնամ, օտարական մըն է այս երկրի վրա», — կըսե հեղինակը: Ասկե՝ այն օտարությունը, խորությունը, որ երկինքի և երկրի միջև գոյություն ունի իբրև հակադրություն, տեղ պիտի գտներ իր և իր ժամանակաշրջանի կարգ ու սարքին, ընկերային հարաբերություններուն և մարդկային բարոյականության միջև: Բայց և այնպես, Հիսուս երբեք օտարական մը չէր՝ այս բառին բուն իմաստով: Ընդհանրապես, Ան իբրև հարազատ եղբայր մը, ամենեն մոտիկ բարեկամ մը եկավ: Բայց ժամանակաշրջանի վայրագ բարքերը, բիրտ ու քարացած մտայնությունները և վատշվեր հոգեբանությունները մարդոց՝ Զինքը խորթ մը, օտար մը, դրսեցի մը ըրին և տեղ չտվին իրենց ծոցին մեջ: Հիսուս բոլոր ժամանակներու և բոլոր մարդերու եղբայրն էր, նվիրագործված եղբայրությունը: Ան գերազանցապես սիրո առաքյալ մը եկավ երկիր, բայց խորթ ճանցվեցավ, անկեղծ ու անձնվեր բարեկամ մը եկավ, բայց թշնամի մը սեպվեցավ: Եվ, ահա, մարդոց փակ սիրտերուն տարաբեր, այլ շնականորեն անձնապաշտ եսականությունը ոչ միայն մերժեց Զինքը, այլև իր կիրքին կորույթներն և ատելության սաստկություններն անասնացած՝ Անոր անհուն սիրուն փոխարեն մահով վարձատրեց Զայն: Հիսուս, այո՛, պանդխտ մըն էր իբրև տարաշխարհիկ բնակիչ, բայց իր կյանքին և առաքելության բուն կոչումով Ան կուգար վերացնելու բոլոր տարապարտ օտարություններն ու պանդխտությունները: Համայնասիրության և համեղբայրության գերագույն խորհրդանշան՝ **Օտարականի** մեջ Հիսուս մեզի կենդանական բոլոր ժամանակներու հավիտենական եղբայրությամբ:

Այսպիսով, «Օտարականը» մեզի կպատմե «կյանքն ու գործը պանդխտ Աստծուն, որ օր մը վար իջավ աստղերեն, երբ մեր աշխարհը տակավ կհեռանար երկինքեն»: Գրագետ պատրիարքը հավակնություն չունի, անշուշտ, բան մը ավելցնելու սրբազան մատչանին վրա, որովհետև կհավատա, թե «ոչ մեկ մարդկային հանձնար պիտի կրնա ավելին ընել, քան ինչ որ պատմված է հոն»: Ժիշդ է: Եթե Ավետարանը իբրև **ստեղծում**, այսինքն՝ «իբրև կյանք ու խորհուրդ, իբրև տեսիլք ու երազ» վեր կմնա մարդկային կարելիություններու սահմաններեն, այսուամենայնիվ, վերջնականապես և ամբողջովին անհաղորդ ալ չէ մարդկայինեն վեր և

դուրս՝ մեր ազատագրման կարողություններուն, որ աստվածային ձգտումներն են մեր մեջ: Վասնզի Ան երկինքեն երկիր է իջած, երկիրը երկինքին միացնելու համար:

Գիրքը հեղինակի կողմն նախընտրաբար «վիպերգային» տարազի մը մեջ կմատուցվի մեզի, որ ընթերցողը բնականորեն կընդգրկվի կենդանի գործողություններու ոլորտեն ներս, և հետո, ինչ որ ավելի կարևոր է, անմիջական հարաբերություններու մեջ կդրվի, որպեսզի անոր մահկանացուի կարողություններուն ընծայվին Հիսուսի ներշնչվածությունով ապրելու կարելիություններ:

Գիրքը գրված է կանխավ մշակված հատակագիծով: Անոր մեջ դեպքերն ու գործողությունները կզարգանան և կծավալին հիմնական երեք մեծ սկզբունքներու եռանկյան մը բոլորագիծերեն ներս: Մարդկության փրկություն, արքայության գերիշխանություն և խաչին մահով մահը սպանելու իրողություն: «Վիպայնացման» բոլոր անհրաժեշտ տարրերն ու աստղանշանները օգտագործված են հեղինակի կողմն: Միջավայր, բնություն, անձեր, բարքեր, հոգեբանություններ, պայքար և հակադիր բախումներ: Եվ այս ամենը շաղախված են իրարու բանաստեղծական փայլուն և հարուստ լեզվով, ազնվական ունի մը ոսկեհյուս բանվածքով: Բայց գիրքին սրժեքը ոչ այնքան իր գրական արտաքին շքեղություններուն մեջ կկայանա, որքան բովանդակության մեջ, Քրիստոսի հայտնած ճշմարտություններուն ներքին իմաստներուն վրան կատարված թափանցումներուն, աստվածային խոհի ու խորհուրդի բյուրեղացման մեջ:

Ասկե պետք չէ հետևցնել սակայն, որ հեղինակը կզբաղի վարդապետական, աստվածաբանական և կամ բնագանգական խրճիթներուն մտահայեցողությամբ: Ոչ: Գիրքին նպատակն է տալ կենդանի կյանքը ճիշտ այնպես, ինչպես որ եղեր է Հիսուսինը, արտաքնապես պարզ ու հասարակ, բայց ներքնապես լուսավոր ու աստվածային: Հեղինակը կձգտի այդ ներքին կյանքի իրավարժեքները ներկայացնել ընթերցողներուն և հրավիրել զանոնք այդ ներքին կյանքի օրենքներով ապրելու, որ բուն կյանքն է մարդոց, որպեսզի աշխարհը վերածվի դյուխի ու անմահական երազի մը՝ դեպի աստեղերը բարձրանալու հարաճուն վերելքի մը բերկրանքին մեջ:

Գիրքը կսկսի իր գործողության: Հեղինակը իր հերոսը աշնան առտու մը դուրս կհանե Նազարեթի իր խրճիթեն և Զայն կդրկե իր առաքելության: Բայց գործի սկսելն առաջ անհրաժեշտ է անցնիլ մկրտության խորհուրդին: Այսինքն՝ սրբագործվիլ պետք է Իր տեսիլքին նվիրաբերվելն առաջ և ընդունիլ օ-

ծումի դրոշմը: Հիսուս աշխարհ կուգար իբրև խոստացված մեսիա մը: Այսինքն, փրկության Առաքյալ մը: Բայց Իր բերած փրկությունը տարբեր էր ժամանակի ակնկալածեն: Ան չէր գար ուղղակիան հոգրությունը բանակներու ուժին կոթնած՝ հատուցել կարենալու համար հրեա ժողովուրդին՝ իր մակառարեն ունեցած վրեժխնդրությունը: Ան չէր գար իբրև համբավալոր իմաստուն կամ պատմութեամբ օրենագետ: Անկիւ տարբեր հունե մը կուգար, տարբեր հունով մը փրկելու մարդկությունը: Անոր համար «Մեսիան ան էր, ով կրնար սիրել ամբողջ աշխարհը և մեռնիլ մարդոց փրկության համար»:

Մարդերուն փրկությունը: Արդի իմաստով՝ մարդոց ազատագրումը: Հեղինակը կշեռտե, որ ասիկա չպայմանավորվեցաւ երբեք նյութական չափանիշներու գերազանցատությանը: Քրիստոսի ամենեւն ճշմարտապաշտ դարուն մէջ: Ընդհակառակն, մասնավոր քրիստոնէական մը աշխարհի և աշխարհայինի հանդէպ պայմանավորեց իր փրկության գաղափարականը, գտնելով, որ մարդը վեր է իրեն և առարկայէն, և մարդկայինը կուսի հոն, որ իրենէն տիրակալություններու ասամանները կվերջանան, և մարդկայինը ինքզինք իրագործել կսկսի առարկայականի կախարդանքներէն տեսալէս և անդու կերպով ունեցած հրաժարումներով: «Ազատեցէ՛ք ձեր միտքն ու հոգին աշխարհի չարնէն, նյութի տիրապետութենէն», — կըսէ Քրիստոս հեղինակի բերնով: Ասիկա, հարկավ, առաջին վճռական շրջադարձն է մարդկայինէն դէպի աստվածայինը եղած անցումի ճամբուն վրան: Երկրորդաբար՝ փրկություն ինքզինքն և ինքզինքն մէջ: Հո՛ւն է Քրիստոսի ամենամեծ առավելությունը: Եվ արդարև, մարդկային փրկության կերպարամասնությունը կսկսի իր տկարություններէն և իր մեղկ բունի թմբիւրներէն ունեցած պատկումներով: Եվ ասիկա ճիշտ այն պահն է, որուն կհաջորդէ մարդու կատարելության, ինքնակատարելագործման վարդապետն ու շաղկապը: Իսկ անձին կատարելագործումը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ մեր ոգեկանի հասունացումը, մտքի և հոգիի միահեծան տիրապետությունը մարմնեղենի վրա: Հոգիի այս թագավորության առթիվ Եղիվարդ կշեռտէ իրավամբ. «...Թագավորությունը մտքին ու հոգիին, հրաժեշտին և մաքրության, արժեքներու և երջանկության, բայց մանավանդ կատարելության»: Ասիկա պարզ լեզուով կընշանակէ՝ անձին ազատագրումը նյութեղէնի գերելարությունէն: Կնշանակէ, հետևաբար, մարմնավորի թուլամետ ցանկություններու չեղոքացումը, ստորակայումը հոգիի օրենքներուն: «Ով որ կրնա հաղթել մարմնի կա-

րիքներուն, — կընդգծէ պատրիարքը, — այն միայն կրնա փառավորել կարիքը: Նյութին ծառայողը չի կրնար տերը ըլլալ նյութին»: Այսպիսով՝ անձնազատագրումը, անձնազատությունը մը չէ, այլ անձնիշխանությունը: Եթէ անձնազատությունը կենթադրէ մեզ հպատակություն մը անձին պահանջներուն, ապա երկրորդը՝ հպատակութենէն ձերբազատած իշխանություն մը պահանջներու հրամայականներուն վրան: Ասկէ կհետևի, որ աշխարհին տիրանալու մեր բաղձանքները գերազանցապէս կպսակվին անկէ՝ հրաժարելու, զայն կորսնցնելու մեր հակումներով: Տիրանալու մեր կիրքին մէջ հաճախ մեր անձին ծառայամտությունը, ստրկությունը կատարարենք ակամա, և կկորսվինք: Իսկ Հիսուսի կերպին մէջ, որ կհրաժարի, մեր իշխանությունը կապահովենք, և կփրկվինք: «Ամեն բան ունենալու միակ գաղտնիքը, — կըսէ Եղիվարդ, — անոնցմէ հրաժարիլն է»: Եվ, իրապէս, այն բոլոր բաղձանքները, որոնք չեն նպաստեր ու չեն երաշխավորէր այդ փրկությունը, կնշանակէ՝ մեր կորուստը կորսնակալէն: Մեր փրկության կոչումն էր որս՝ տարակա աշխարհի կանչերու և հրավերներու ետեւէն վազող անձը չի կրնար մերիկը ըլլալ: Այդ անձին կորուստով է, որ մենք կազատագրվինք և կվերադառնանք մեր սեփական ու բարձրագույն անկախության:

Փրկության այս ճամբուն վրա, ասկիւյն, մարդու ազատագրումը չի կայանար ինքնզինքն և իր շրջապատէն ունեցած օտարացման և ուժացման մէջ: Անկիւ էապէս և մասնավորապէս սիրո հաշտ ու խաղաղ թագավորություն մըն է: Աստուծո թագավորությունը, եթէ կուգեք՝ սիրո մականի տակ սերեն համերաշխված մարդկային հարաբերություններն են: Մի՛ մոռնաք, որ Աստուծո մեծագույն ստորոգելին՝ սէ՛րն է: Սիրել եղբայրը, բարեկամը, ընկերը, դրացին և մուկնիս թշնամին՝ սեփական անձին պէս: **Աստված սեր է:** Կնշանակէ՝ Քրիստոսի խոստացած արքայությունը սիրո գերիշխանությունն է և այդ արքայության ապագա հասարակապետության մէջ մարդոց հոգիներու պատվանդանին վրա նստած միակ զգացումը՝ սերը պիտի ըլլա: Առանց «սիրո շաքարին» կյանքը մութ է, տարապարհակ և անիմաստ բան մը, կըսէ Եղիվարդ և կավելցնէ. «Երբ սիրով կկատարեք ձեր պարտականությունները, դուք հաշտ եք թէ՛ ձեզի, թէ՛ ձեր շուրջիներուն և թէ՛ Աստուծո հետ»: Եվ ճիշտ ասոր համապատասխան՝ Աստուծո արքայությունը մեր մէջն է և մեռ մեջէն կսկսի: Սերէն չեն ակործիր այն մարդիկ, որոնց հոգիները մութ քարանձավ մըն են խողով ատելություններու, նենգ թշնա-

մանքներու, ստորություններու, ոճիրի և արքայան: Որովհետև անոնց հոգիները շարունակ ճարակ իրենց կիրքերու այրող հեշտանքին՝ չեն կրնար զգալ սիրո երանությունները: Աստուծո՛ւ արքայությունը, որ լույսի, բույրի, ծաղիկի ու երազի հարազատն է, մեկ առ միշտ կախանքն ու կյանք մըն է, մեկ առ միշտ կախանքն ու չընչացումը բնագոյի գիշատիչներուն: «Ու՛ր որ կսիրե, իր հոգիին խորը ունի հատուցումը անմեկնելի ուրախության, որ մեր ցավալիքն առջեւ կշողացնէ հրաշագործ գաղտնի մը անքիծ պայծառությունը», — կգրէ հեղինակը: Եվ հիրավի, արքայությունը, որ աստվածության հարակից ընկերություն մըն է, աստվածային էության մերձեցում մը, բայց ոչ նույնացում, կենդանորէ մարդկային աղտեղություններէ կատարյալ մաքրագործում, ազատագրում չարեն և մարմնի կապանքներէն: Այսպիսով, աստվածությունը, որ մեր էության խորունկ ալքերուն մէջ թաքցած առգոլիմակ մըն է, հոգիի անուշով և հոգեկան գարգացումով կարելի կդարձնէ մեզ «մահու» Աստուծո՛ւ և ըլլալ օրհնավոր քաղաքացի մը թագավորության»:

Այսպիսով, արքայության հաղթանակ կնշանակէ մարդու փրկություն կամ մարդու ազատագրություն, և փոխադարձաբար, մարդեղենէ ձերբազատում անձին կատարելագործմամբ՝ Աստուծո՛ւ նմանության մէջ, կնշանակէ՝ արքայության գերիշխանութիւն: Տրամաբանական այս կոտ շղթայով սերտորէ իրարու կապված և իրարմէ անբաժան՝ գիրար լրացնող և ամբացնող անհրաժեշտություններ կիրագործվին մեկը մյուսի մէջ, և մեկը մյուսով պայմանավորված: Եվ երրորդը, ահա, իբրև պատկառումը առ ից, չարին հաղթահարումն է մահվամբ: Մահը մահով սպաննելու իրողությունը: Հիսուս մահը սրբագործում մը հայտարարեց և ընդվզում մը բոլոր մահացուցիչ հանգամանքներու ընդդէմ: Մահը հաղթահարելու համար պետք է որ մեղովին բոլոր մահկանացու վիճակները: Ու ճշմարիտ կյանքը անընդմեջ մահացումներու շարք մըն է բոլոր մահկանացու գոյալիճակներու: Ասկէ՛ բուն կոսմոսի հարությունը: Ասկէ՛ մահվան պայտուղապաշտ նահանջը: «Երանի անոնց, որ... կրնան իրենց մահով խորտակել կապառիշ գերեզմանին: Որոնց պարտությունն ու մահը քաղցր հաղթանակ մըն է, դարերու սիրտը արյունով լուսավորող», — կգրէ հեղինակը: Հաղթական կյանքը միշտ հոգիին կատարականի, ինչպէս մարդուն մէջ ճշմարիտ ու աւերորնչական գոյությունը հոգիինն է, հոգեկանը, որով մարդ կտարանջատվի կենդանական աշխարհէն և կդառնա աստվածային արարած մը:

Եվ ահա չարը կպարտվի ճիշտ այն պա-

հուն, երբ Հուդայի միջոցով կանցնի մահու դարձ հարձակման:

Այստեղ պետք կզգանք շեշտելու, թէ Հուդայի մատնիչության առթիւ հեղինակի տված մեկնաբանությունները գիրքի խիստ շահեկան և հետաքրքրաշարժ էջերը կկազմեն: Չարին խորհուրդը, որ արտահայտվեցաւ Հուդայի միջոցով, Եղիվարդ կհամոզէ մեզի, թէ պատահական չարիք մը չէր, այլ նույն ինքն չարությունն էր, որ գործեց սնոյ արարքին մէջ: Մատնիչությունը անոր ներքին էության բխումն էր և ոչ թէ արտաքին ազդեցություններու հետևանք, և ասոր համար իսկ ան դատապարտված էր կործանման: Իսկ եթէ արտաքին դրդապատճառի փաստ մըն ալ գոյություն ունեցած է, ատիկա միայն գործողության մէջ դնելու համար չա՛րք:

Հիսուս և Հուդա՛ երկու տարբեր շնորություններ և երկու ներհակ էություններ ծամանակավորապէս քով-քովի եկած՝ կխորհրդանշեն բարին ու չարը, ինչպէս միւրո էության մէջ այդ երկու բնությունները կապրին միասնաբար: Բայց երբ մահը կուգա սրբագործելու զանոնք՝ մեկունը կըլլա հաղթանակ և մյուսինը՝ կորուստ:

— Պետք է որ մատնէի զինքը, — ըսաւ Հուդան, — ազատվիլ կարենալու այն զգացումն, որ կնեղէր զիս: Ես չէի զինք մահկան դրկողը, այլ ճակատագիրը: Ոճիրը, զոր գործեցի, առանց ոճրագործի արարք մըն էր, ես միայն բութ միջնորդը եղա այդ եղբարախաղին: Սինեդրիոնը, Կալաթան, Պիղատոսը, զինվորները, ամբոխը, նույնիսկ աշակերտները և բովանդակ մարդկությունը՝ ինձի հետ միացած մատնեցին Զինքը:

Հրաշալիորեն ձևակերպված այս խտացումին մէջ կա այն ճշմարտությունը, թէ մարդկության բնության մէջ ապրող հալիտեական չարիքը սպաննեց Հիսուսը: Կրնշանակէ՛ Հիսուս մեկ մարդու սովորական գոհը չեղաւ, այլ համայն մարդկության:

«Օտարականը» կավարտի Հիսուսի հովաքանքը:

